Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում
Հարավային Կովկասում

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի ելակետային ուսումնասիրություն

«Բի Էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոն

Հաշվետվություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

WITH FUNDING FROM
AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

Մարտ 2017թ.

Ամփոփագիր

Հաշվետվության նպատակը

Սույն հաշվետվությունը մշակվել է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կողմից (այսուհետ՝խորհրդատու) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության համար (այսուհետ՝ GIZ (կամ ԳՄՀԸ))՝ «Կենսաբազմազանության ինտեգրացված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր) Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում առկա իրավիճակին նախնական գնահատական տալու նպատակով: Ծրագրի շրջանակում հատկապես կարևորվում են Ապարանի տարածաշրջանի 4 համայնք՝ Արայի, Քուչակ, Լուսագյուղ եւ Հնաբերդ[1] (այսուհետ՝ պիլոտային համայնքներ):

Գնահատումը հիմնված է հետևյալ հիմնական ոլորտների ուսումնասիրության վրա՝

- ✓ Շրջակա միջավայր,
- ✓ Սոցիալ-տնտեսական իրավիճակ,
- ✓ Հողօգտագործում,
- ✓ Բնական ռեսուրսները և դրանց կառավարումը (գործնականը և իրավական դաշտը),
- ✓ Հիմնական ծրագրերը և իրականացված միջոցառումները:

2011-2016 թվականներն ի սկզբանե սահմանվել են որպես տվյալների հավաքագրման առավել արդյունավետ ժամանակահատված:

Ստորև ներկայացված հաշվետվությունում Դուք կարող եք տեսնել Արագածոտնի մարզի սոցիալական ոլորտի, տնտեսության և բնական ռեսուրսների, ինչպես նաև այլ հարակից ոլորտների նշանակալի ցուցանիշների դինամիկան՝ հատուկ ուշադրություն դարձնելով Ապարանի տարածաշրջանին և Պիլոտային համայնքներին:

Սույն հաշվետվության նպատակն է պատասխանել մի շարք հիմնական հարցերի, ինչպիսիք են՝

- ✓ Ո՞ր ոլորտներն ունեն բարելավման կարիք:
- ✓ Ինչպիսի՞ հիմնախնդիրների շուրջ պետք է կենտրոնանալ և ինչպիսի՞ հիմնախնդիրներ պետք է լուծել ծրագրի ընթացքում:
- ✓ Ո՞ր հիմնական սովորույթները պետք է արմատախիլ անել պիլոտային համայնքների հետագա զարգացման համար:
- ✓ Ի՞նչ ենթակառուցվածքներ են բացակայում պիլոտային համայնքներում կտրուկ փոփոխություններ կատարելու համար:

---

[1] Համայնքը գտնվում է Արագածի շրջանում, բայց այս ուսումնասիրության մեջ դիտարկվում է որպես պիլոտային համայնք:

Հիմնական արդյունքները և եզրակացություններ

Արագածոտնի մարզում՝ հատկապես Ապարանի շրջանում, տիրող ընդհանուր իրավիճակի մասին համառոտ պատկերացում կազմելու համար հարկ է նշել, որ այս տարածքն ունի բազմաթիվ հնարավորություններ և ներուժ՝ տարբեր ուղղություններով զարգանալու համար, ինչպիսիք են, օրինակ, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, հանքարդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը՝ մասնավորապես տեքստիլ և գորգերի արտադրությունը։

Հետաքրքիր է դիտարկել, որ գրեթե բոլոր հայկական մարզերը տարբեր ոլորտներում բարգավաճելու թաքնված ներուժ ունեն։ Հիմնական խոչընդոտ են հանդիսանում ռեսուրսների և կապերի բացակայությունը, սահմանափակ մուտքը դեպի ավելի լայն շուկաներ՝ իրենց կարողությունները ցուցադրելու և սոցիալ-տնտեսական կյանքն ակտիվացնելու, տնտեսական, արդյունաբերական և բնապահպանական նշանակությունը բարձրացնելու, ինչպես նաև երկրի առաջընթացում արժանի տեղ զբաղեցնելու համար։

Հստակ պատկերացում կազմելու համար նշենք, որ Արագածոտնի մարզը, ունենալով բարենպաստ նախապայմաններ կայուն տնտեսական աճի համար, ունի նաև խոչընդոտներ, որոնք խանգարում են վերջինիս արագ զարգացմանը։ Օրինակ՝ մարզում բարձրագույն կրթական հաստատությունների, մշակութային կենտրոնների բացակայությունը մեծ ազդեցություն են ունենում բնակչության զբաղվածության և կենսամակարդակի վրա։

Մյուս կողմից, երբ դիտարկում ենք համայնքները և գյուղական բնակավայրերը, ակնհայտ է դառնում, որ գյուղատնտեսությունը չի օգտագործում իր ամբողջ ներուժը, որի պատճառն այնպիսի բնական պաշարների օգտագործման չարաշահումն է, ինչպիսիք են արոտավայրերը և հողերը։ Արոտավայրերի օգտագործման չարաշահումը, հողերի էրոզիան և դեգրադացիան այստեղ ամենակարևոր և առաջնահերթ խնդիրներն են, որոնք ենթակա են հրատապ լուծման։

Թեև այստեղ 2015 թվականին սկսված «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիրն ուղղված է իրավիճակը բարելավելուն, այնուամենայնիվ, մի քանի խոշոր գործընկերների համագործակցությունն ու ուժերի համատեղ օգտագործումը կարող էին էապես նպաստել գործընթացին։

Ինչ վերաբերում է երկրորդական տվյալների հավաքագրման աշխատանքներին, անշուշտ պետք է նշենք, որ էլեկտրոնային տվյալները, ինչպիսիք են ինտերնետային կայքերը, հաշվետվությունները և այլ հրապարակումները, առաջադեմ չեն և չեն պարունակում չափազանց հարուստ տեղեկություններ և կարող են համարվել պակաս օգտակար, քան միջազգային տվյալների համանման կատեգորիաները։ Բացի այդ, առկա տվյալները պատշաճ կերպով ստանդարտացված չեն և միևնույն աղբյուրից բավականին բարդ է ստանալ նույնատիպ տվյալներ միաժամանակ երկու համայնքների, մարզերի կամ այլ վարչական միավորների համար։ Սա վկայում է տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների թափանցիկ և հստակ գործունեության պակասի մասին (այս խնդիրն ընդհանուր է գրեթե ողջ երկրի համար)։

Նույն խնդիրը նկատվում է համայնքային ռեգիստրների հիմնական տվյալների դեպքում, որոնք, ենթադրվում է, պետք է լինեն համայնքի բնակչությանը և կյանքին վերաբերող ցանկացած տեղեկատվության ամենահավաստի աղբյուրները։ Այստեղ առկա է արխիվային փաստաթղթերի պահպանման լուրջ խնդիր, բարձր տեխնոլոգիաների օգտագործման

բացակայություն (թեև բոլոր պիլոտային համայնքները համապատասխան ծրագրի շահառուներ են եղել) և նույնիսկ շատ կարևոր տվյալների ոչ գրագետ հաշվարկների (օրինակ՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ տվյալների փոխանակումը) միտում։ Հատկապես Արագածոտնի մարզում մենք ևս հանդիպում ենք համայնքային ռեգիստրների և տարատեսակ թղթերի, հաշվետվությունների, հետազոտությունների և հարակից այլ փաստաթղթերի անհասանելիության խնդիրներին, որոնց հավաքագրումը և ընդհանուր մեկ վերլուծական ծրագրի մեջ ներդնելը շատ բարդ գործընթաց է։

Բովանդակություն

Աղյուսակների ցանկ viii

Գծապատկերների ցանկ ix

Նկարների ցանկ x

Հապավումների և կրճատումների ցանկ xi

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1.1 Մեթոդաբանություն և գործիքակազմ 1

1.2 Արագածոտնի մարզի ընդհանուր նկարագիրը՝ ըստ շրջակա միջավայրի, սոցիալ-տնտեսական և այլ չափանիշների 2

1.3 Պատմական համառոտ ակնարկ 4

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ 5

2.1 Ապարանի շրջանի ֆիզիկական-աշխարհագրական նկարագիրն ու առանձնահատկությունները 5

2.2 Բնակլիմայական պայմաններն ու տատանումները. ազդեցությունը սոցիալ-տնտեսական վիճակի վրա 7

2.3 Հիմնական բնական պաշարները տարածաշրջանում 8

2.4 Տարածքում բնական պաշարների պահպանմանը խոչընդոտող հիմնական գործոնները. ախտանշաններից մինչև պատճառների վերլուծություն 8

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 10

3.1 Տարածաշրջանում տնտեսության զարգացած և զարգացող առանցքային ճյուղերը 10

3.2 Ժողովրդագրություն, կրթություն, աշխատանք, արտագաղթ, կենսամակարդակ, եկամուտ և ծախսեր, ապրուստի և գոյատևման համար անհրաժեշտ բնական պաշարներից կախվածություն, էներգիայի աղբյուրներ և հարակից ոլորտներ (համակցված վիճակագրություն վերստուգված փաստացի տվյալների հիման վրա) 16

3.3 Ոլորտում գործող հաստատությունները 24

4. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 25

4.1 Հողի տեսակները և օգտագործման ուղղությունները: Ընդհանուր նկարագիր և քարտեզագրում 25

4.2 Բուսականությունը տարածաշրջանում՝ կախված դրանց տեսակներից և օգտագործման ազդեցություններից (ներառյալ լուսանկարները) 26

4.3 Ոլորտում նշանակալի փոփոխությունները 29

4.4 Առկա օրենքներն ու իրավական կարգավորումները. ուժեղ և թույլ կողմերը, լրացման ենթակա շոշափելի բացթողումները 30

5. ՊԻԼՈՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԸ 31

5.1 Բնական պաշարների, ինչպես օրինակ բնական անտառների, արոտավայրերի, ջրային պաշարների քարտեզագրում. ընդհանուր նկարագիրը և վտանգները 31

5.2 Վերոհիշյալ պաշարների օգտագործման փորձն ու զարգացման միտումները. արձանագրված լավագույն փորձերը, սովորությունները և բարելավման անհերքելի անհրաժեշտությունը 36

6. ՊԻԼՈՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՂ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՐՈՆՔ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ ԿԱՄ/ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2011-2016 ԹՎԱԿԱՆՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐԸ 37

6.1 Կազմակերպությունների կողմից իրականացվող/ֆինանսավորվող ծրագրերի համառոտ նկարագիրը. նպատակային ոլորտները և ընթացիկ կարգավիճակը (ավարտված կամ ընթացիկ) 37

6.2 Լավագույն և վատագույն փորձերը. հաջողության պատմություններ և քաղված դասեր38

7. Եզրակացություն 39

8. Օգտագործված գրականության ցանկ 40

9. Հավելված 41

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Ապարանի աշխարհագրությունը 7
Աղյուսակ 2. Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ծավալը և դրա տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, միլիարդ դրամ և % 12
Աղյուսակ 3. Ապարանի շրջան, կենդանիներ, 2016 թ. 12
Աղյուսակ 4. Կենդանական ծագման արտադրանք, Արագածոտնի մարզ, 2016 թ. 13
Աղյուսակ 5. Շինարարության տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %..... 14
Աղյուսակ 6. Մանրածախ առևտրի տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %..... 14
Աղյուսակ 7. Ծառայությունների տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %..... 14
Աղյուսակ 8. Մանրածախ առևտրի կետեր, քանակն Արագածոտնի մարզում 15
Աղյուսակ 9. Արտահանման ծավալն ու տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և % 16
Աղյուսակ 10. Ներկրման ծավալն ու տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %..... 16
Աղյուսակ 11. Ժողովրդագրությունը պիլոտային համայնքներում, տարիքային և սեռային խմբերը, 2016 թ. 18
Աղյուսակ 12. Միջնակարգ դպրոցները, Արագածոտնի մարզի հաճախելիության մակարդակը, 2015/2016 ուսումնական տարի 19
Աղյուսակ 13. Գործազրկության մակարդակն Արագածոտնի մարզում՝ ըստ սեռի, %, 2014-15 թթ. 20
Աղյուսակ 14. Արտագաղթն՝ ըստ ծավալի, նպատակի, ուղղվածության և համայնքների հնարավորությունները, 2016 թ. 22
Աղյուսակ 15. Արագածոտնի մարզի աղքատության մակարդակը՝ համեմատած հանրապետությունում առկա միջին ցուցանիշի հետ, %, 2012 – 2015 թթ. 22
Աղյուսակ 16. Արագածոտնի մարզ, եկամուտի աղբյուրներ՝ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, դրամ, 2015 թ. 23
Աղյուսակ 17. Գյուղատնտեսական հողերի բաժանումն Ապարանում և պիլոտային համայնքներում՝ ըստ դրանց օգտագործման և տեսակների, հա, 2015 թ. 26
Աղյուսակ 18. Հողի օգտագործման տեսակներն՝ ըստ գյուղատնտեսական արտադրանքի, Արագածոտնի մարզ, 2015 թ. 28
Աղյուսակ 19. Ապարանի ջրամբար 35

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Տնտեսության հիմնական ճյուղերն Արագածոտնի մարզում, մասնաբաժինը ՀՀ տարածքի մասշտաբով, %, 2015 թ. 10
Գծապատկեր 2. Արդյունաբերական ճյուղերն Արագածոտնի մարզում, մլն դրամ, %, 2015 թ. 11
Գծապատկեր 3. Արդյունաբերության ծավալի դինամիկան Սյունիքի մարզում, մլն դրամ 11
Գծապատկեր 4. Արտադրական նշանակության կենդանիներ, 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ 13
Գծապատկեր 5. 2016 թ. դրությամբ Արագածոտնի մարզում ծառայությունների բաշխումը՝ ըստ տեսակների, մլն դրամ և % 15
Գծապատկեր 6. Բնակչության դինամիկան, 2011 – 2016 թթ. 17
Գծապատկեր 7. Տնային տնտեսությունների թիվը պիլոտային համայնքներում 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ 18
Գծապատկեր 8. Միջին ամսական անվանական աշխատավարձն Արագածոտնի մարզում, դրամ, 2013 – 2015 թթ. 20
Գծապատկեր 9. Արագածոտնի մարզ, եկամտի բաշխում մեկ շնչի հաշվով, 2015 թ. 23
Գծապատկեր 10: Գյուղատնտեսական նշանակության հողեր, Արագածոտնի մարզ, հա, 2016 թ. 25

Նկարների ցանկ

Նկար 1 Արագածոտնի մարզի քարտեզը 2
Նկար 2 Կլիման Ապարանի շրջանում 7
Նկար 3 Բուսական ծածկույթի և արեալների տարբեր տեսակների բաշխումը Հայաստանում 26
Նկար 4 «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիր՝ ԳՄՀԸ կողմից, ծրագրի տարածքը 29
Նկար 5 Հայաստանի անտառները 32
Նկար 6 Ապարանի ջրամբար 35

Հապավումների և կրճատումների ցանկ

Հա	Հեկտար
Կմ	Կիլոմետր
Մ	Մետր
Մլն	Միլիոն
Մմ	Միլիմետր
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԳՌԿՄ (CARMAC)	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
Ուս.	Ուսումնական

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Մեթոդաբանություն և գործիքակազմ

Տեղեկատվության աղբյուրներով պայմանավորված՝ հետազոտության գործընթացն իրականացվել է երկու հիմնական փուլով. ա) Գրասենյակային ուսումնասիրություն և երկրորդական տվյալներ ձեռք բերելու համար փաստաթղթերի վերանայում և բ) հարցազրույցներ հիմնական տեղեկատուների հետ՝ առաջնային մանրամասներ իմանալու համար:

Գրասենյակային ուսումնասիրություն և փաստաթղթերի վերանայում: Գրասենյակային ուսումնասիրության և փաստաթղթերի վերանայման միջոցով Խորհրդատուն հավաքել է երկրորդական տեղեկություններ տեխնիկական առաջադրանքում նշված թեմայի վերաբերյալ թիրախավորված յուրաքանչյուր շրջանի/ենթաշրջանի և համայնքի, ինչպես նաև համապատասխան ոլորտներում կատարված կարևոր ծրագրերի և զեկույցների մասին: Տարածաշրջանի ռազմավարական փաստաթղթերի, քաղաքականության և իրավական փաստաթղթերի հետ մեկտեղ վերլուծվել են նաև վիճակագրական հաշվետվությունները՝ հասկանալու այս շրջանների/համայնքների ներկայիս սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի վիճակը: Վիճակագրական և այլ վերլուծությունները հիմնված էին զեկույցների և հրապարակումների վրա, որոնք տրամադրվել էին՝

- Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից,
- Մարզի/շրջանի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից,
- Այլ պետական և ոչ պետական կազմակերպությունների, նախարարությունների և միջազգային կազմակերպությունների կողմից:

Հարցազրույցներ հիմնական տեղեկատուների հետ: Խորհրդատուն անհատական հարցազրույցներ է վարել հիմնական տեղեկատվությունը հաղորդողների և շահագրգիռ կողմերի (թիրախավորված շրջանների/տարածաշրջանների և համայնքների համայնքապետարանի ու համայնքապետարանների ղեկավարության և այլն) հետ՝ անձնական հանդիպումներ և հանգամանալից զրույցներ ունենալով: Մասնավորապես, առաջնային հետազոտության փուլի հարցազրույցի հիմնական մասնակիցները համայնքապետերը և/կամ համայնքապետարանի ներկայացուցիչներն են եղել:

Բարձր արդյունավետություն ապահովելու նպատակով խորհրդատվական ընկերության աշխատակիցներից մեկը պատրաստվել է նախօրոք մշակված ուղեցույցի հիման վրա[2]: Հարցազրույցների ընթացքում աշխատակիցը մանրամասն գրառումներ, ինչպես նաև ձայնագրություններ է կատարել՝ հետագայում հավաքագրված տեղեկատվությունը ներկայացնելով գրավոր էլեկտրոնային տարբերակով: Դրանք

[2] Տես հավելված 1

համակարգվել են ոլորտային աշխատանքի ամբողջ ընթացքում և արձագանքներ են ստացել կանոնավոր կերպով տրամադրված նյութերի վերաբերյալ:

Հավաքագրված և վերլուծված երկրորդական տվյալների վերստուգման, ինչպես նաև հանրային նյութերում բացակայող տեղեկատվության լրացման համար պիլոտային համայնքների այցելության ընթացքում ուսումնասիրվեցին նաև 2011-2016 թթ.[3] արխիվային փաստաթղթերը: Բնակչության և կենդանիների համայնքային գրանցամատյանները, հողի տեսակների և արոտավայրերի տնօրինման քարտեզները, ինչպես նաև դրա հետ կապված այլ փաստաթղթերը սկանավորվել և ձեռք են բերվել համայնքապետարաններից:

Ի վերջո, առաջնային և երկրորդական աղբյուրներից ստացված բոլոր տվյալները ճշգրտորեն համադրվել են, գնահատվել, վերլուծվել և ներկայացվել սույն հաշվետվությունում՝ տեքստային պարբերությունների, աղյուսակների, գրաֆիկների և պատկերազարդումների, նկարների և սմարթ արվեստի միջոցով:

1.2 Արագածոտնի մարզի ընդհանուր նկարագիրը՝ ըստ շրջակա միջավայրի, սոցիալ-տնտեսական և այլ չափանիշների

Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի արևմտյան մասում և երեք կողմից շրջապատված է լեռներով: Դրանցից մեկն Արագածն է՝ Հայաստանի ամենաբարձր գագաթը (4090 մետր (մ)), որի անունով էլ կոչվում է մարզը, իսկ հյուսիսարևելյան և արևելյան հատվածներում Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաներն են: Արևմուտքում մարզի տարածքի երկայնքով ձգվում է Թուրքիայի հետ սահմանը, իսկ հյուսիս-արևմուտքում, հյուսիսում, արևելքում և հարավում սահմանակից է համապատասխանաբար Շիրակի, Լոռու, Կոտայքի մարզերին,

Նկար 1 Արագածոտնի մարզի քարտեզը

[3] Միայն այն համայնքներում, որտեղ փաստաթղթերը հասանելի են պատասխանատու անձանց. որոշ համայնքներում դա անհնար էր՝ շենքի հարդարման, անձնակազմի փոփոխության կամ անհամապատասխան կարգուկանոնի պատճառներով:

մայրաքաղաք Երևանին և Արմավիրի մարզին։ Այն զբաղեցնում է 2,756 քառակուսի կիլոմետր (կմ²) տարածք, որը կազմում է ՀՀ ամբողջ տարածքի 9.3 %-ը։ 2016 թ. հունվարի մեկի դրությամբ մարզն ունի 129.8 հազար բնակչություն, որը կազմում է ՀՀ ամբողջ բնակչության 4.3 %-ը։ Այդ թվից 29.1 հազարն ապրում է քաղաքներում, մինչդեռ գյուղերի բնակչության թիվը հասնում է 100.7 հազարի։ Բնակչության խտությունը 47 մարդ է յուրաքանչյուր կմ² վրա։ Մարզի կենտրոնն Աշտարակ քաղաքն է, որ գտնվում է Քասաղ գետի ափին՝ Երևանից 19 կմ հյուսիս-արևմուտք։ Քաղաքով են անցնում Երևան-Գյումրի և Երևան-Սպիտակ ճանապարհները։

Մարզը բաղկացած է Աշտարակի, Թալինի, Ապարանի և Արագածի տարածաշրջաններից։ Աշտարակի և Թալինի տարածաշրջանները մասամբ գտնվում են նախալեռնային հատվածում, մինչդեռ Ապարանի ու Արագածի տարածաշրջանները, ինչպես նաև Թալինի տարածաշրջանի մի մասը լեռնային գոտում են՝ ծովի մակարդակից 2,000-2,500 բարձրության վրա։ Մարզի 19 համայնք ունի լեռնային, 40 համայնք՝ բարձր լեռնային կարգավիճակ։

2016 թ. հունվարի 1-ի դրությամբ Արագածոտնի մարզում առկա են 114 գյուղական և 3 քաղաքային համայնքներ։

Գլխավոր գետը Քասաղն է՝ իր Գեղարոտ և Ամբերդ վտակներով։ Ամենախոշոր լիճը Քարի լիճն է, որ գտնվում է Արագած լեռան ստորոտին։

Մարզն աչքի է ընկնում բազմաթիվ կանգուն ու խարխլված միջնադարյան հուշարձաններով՝ Ամբերդ ամրոցը, միջնադարյան վանքեր, Սաղմոսավանք, Օհանավանք։ Մարզկենտրոնից ոչ հեռու՝ Օշական գյուղում է գտնվում հայ գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, որը սրբավայր է դարձել համայն հայության համար։

Բյուրականի հայտնի աստղադիտարանը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը գտնվում են այս մարզում։

Իրենց տեղակայվածությամբ Լուսագյուղ ու Արայի համայնքները շատ մոտ են Արագածոտնի մարզի Ապարան քաղաքին։ Նախօրոք ընտրված համայնքների աշխարհագրական դիրքը դրանց ապահովում է որոշակի առավելություններով՝ պայմանավորված գյուղարտադրանքի շուկայի հասանելիությամբ։

1.3 Պատմական համառոտ ակնարկ

Արագածոտնի մարզի տարածքը բնակեցված է եղել դեռ նախապատմական ժամանակաշրջանից։ Քասաղ գետի հովիտը շատ գրավիչ էր իր պտղաբեր հողերով և մեղմ կլիմայով։ Այդ մասին են վկայում Բրոնզե դարով թվագրվող գտածոները։ Առաջին մեծ պետությունը, որի մասին հիշատակություններում նշվում է այս պատմական տարածքը, Մեծ Հայքն է։ Դրանից հետո հանդես է գալիս Վարդգեսավան բնակավայրը, որը Վաղարշակ I-ի օրոք (117-140) վերանվանվում է Վաղարշապատ (որը դարձավ Մեծ Հայքի մայրաքաղաքը), իսկ հետո դառնում առաջին մայրաքաղաքը (ներկայիս Արմավիրի մարզում)։

Միջնադարում Արագածոտնի հյուսիսային մասը կոչվում էր Ամբերդի շրջան։ 9-11 դարերում տարածքը Պահլավունիների իշխանական տան սեփականության մի մասն էր։ 14-րդ դարում տարածքը կողոպտվել և ավերվել է Լենկթեմուրի բանակի կողմից։ 16-րդ դարի սկզբին տարածքը պատկանել է Սելֆյան Իրանին։ 1639 թ. Արագածոտնը մտնում էր Երևանի խանության կազմի մեջ և 1828 թ. Արևելյան Հայաստանի մյուս տարածքների հետ անցնում Ռուսաստանին։

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

2.1 Ապարանի շրջանի ֆիզիկական-աշխարհագրական նկարագիրն ու առանձնահատկությունները

Ապարանը գտնվում է Արագած լեռան արևելյան լանջերին, ծովի մակարդակից 1880 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Համայնքն ունի 3 միջնակարգ, 1 երաժշտական դպրոց, մշակույթի տուն, գրադարաններ, 1 հիվանդանոց ու պոլիկլինիկա և կապի հանգույց:

Համայնքի հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր և արոտավայրեր: Տարածքի շուրջ 35 %-ը սեփականաշնորհված է: Պահուստային նշանակության հողերից վարելահողերը զբաղեցնում են 38 հեկտար (հա) մակերես, իսկ արոտավայրերը՝ 415 հա:

Հացահատիկային, կերային և բանջարաբոստանային բույսերի մշակումը նույնպես հատուկ է այս համայնքին: Կան նաև բազմամյա տնկարկներ, բայց դրանք առանձնապես մեծ տարածք չեն զբաղեցնում:

Անասնապահությունը Ապարանում գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Այստեղ զարգացած է կաթի ու մսի արտադրությունը, և գլխավոր հումքը՝ կաթը, հիմնականում վերամշակվում է տեղի պանրի գործարանում:

Այստեղ գործում է «Հայգորգ» ընկերությունը, որտեղ արտադրվում են գորգեր և կարպետներ: Կան նաև սպառողական/կենցաղային ապրանքների, սարքավորումների, տեքստիլի և գործվածքի արտադրության ձեռնարկություններ:
Այստեղ զարգացած է նաև սննդի արյունաբերությունը, գործում է նաև կաթի վերամշակման ու պանրի արտադրության գործարան:

Համայնքի հիմնական խնդիրների շարքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել աշխատանքային ռեսուրսների լիովին օգտագործման, խմելու և ոռոգման ջրագծերի նորոգման, փողոցների լուսավորության, քաղաքի գազաֆիկացման խնդիրներին և լուծել դրանք:

Պիլոտային հաջորդ համայնքը **Արայի** գյուղն է: Այն գտնվում է Ապարանի շրջանում՝ Ապարան քաղաքից 15 կմ հեռավորության վրա: Մարզկենտրոն Աշտարակից հեռու է 13.5 կմ: Նախկինում կոչվում էր Բազարջիկ, Բազարջյուղ: Վերջնականապես վերանվանվել է 1946 թ.: Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է գյուղում 19-րդ դարում: Գյուղը գտնվում է Արագած լեռան արևմտյան փեշերին, ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա:

Ունի դպրոց և կապի հանգույց: Սեփականաշնորհված հողերը զբաղեցնում են համայնքի տարածքի շուրջ 25 %-ը: Հողերը հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր, որտեղ գլխավորապես մշակվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային բույսեր և պտղատու ծառեր:

Տարածքի ամբողջ մակերեսի 2800 հա տարածքը զբաղեցնում են արոտավայրերը:

Այստեղ բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Զարգացած չէ արդյունաբերական որևէ ճյուղ:

Առկա հիմնախնդիրներից առաջնային է խմելու ջրագծերի և մինչհամայնքային ճանապարհների վերանորոգումը։

Գյուղն ամեն տարի մասնակցում է Ապարանում նշվող Նոր տարվա տոնակատարությանը՝ իրենց ավանդական ուտեստով և մշակութային արժեքներով։

Քուչակ գյուղն Ապարանից 8 կմ դեպի հարավ գտնվող մեկ այլ պիլոտային համայնք է։ Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ։

Գյուղում կան 17-19-րդ դարերին պատկանող գերեզմանոց և մատուռ։

Գտնվում է ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա։

Համայնքը հիմնականում մասնագիտացված է երկրագործության մեջ։ Հողերի մեծ մասն օգտագործվում է որպես վարելահող, արոտավայրեր և խոտհարքեր։ Բնակչությունն այստեղ զբաղված է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկային և կերային բույսերի մշակմամբ։ Պահուստային հողերը կազմում են համայնքի տարածքի շուրջ 60 %-ը, որոնք բաշխված են հետևյալ կերպ՝ 392 հա արոտավայրեր, 120 հա վարելահողեր։

Մանր եղջերավոր անասնապահությունը, թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են այստեղ։ Արդյունաբերական ոչ մի ճյուղ զարգացած չէ համայնքում։ Սննդի արդյունաբերության միայն մի ձեռնարկություն կա, որտեղ վերամշակվում է մսամթերքը, ինչպես նաև առկա է գորգագործական գործարան։

Լուսագյուղ համայնքը գտնվում է մարզկենտրոնից 34 կմ հեռավորության վրա։ Այն փռված է Ծաղկունյաց լեռների լանջերին, ծովի մակարդակից 1970 մ բարձրության վրա։

Գյուղը հարուստ է գարնանը։ Այն բնակեցվել է 1829-1830 թվականներից։

Գյուղը հիմնականում մասնագիտացված է երկրագործության մեջ։ Հիմնական գյուղատնտեսական հողերի զգալի մասն օգտագործվում է որպես վարելահողեր և խոտհարքեր։ Գյուղերի բնակչությունը զբաղված է բանջարաբուծությամբ, հացահատիկային և կերային բույսերի մշակմամբ։ Հողատարածքներում առկա են բազմամյա տնկարկներ, տարածված է պտղաբուծությունը։ Պահուստային հողերը կազմում են համայնքի տարածքի շուրջ 70 %-ը, որոնցից 414 հա արոտավայրերն են, իսկ 25 հա՝ վարելահողեր։

Բնակչությունը զբաղված է նաև մանր ու խոշոր եղջերավոր անասունների բուծմամբ, հատկապես զարգացած է կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունը։ Արդյունաբերությունը զարգացած չէ այստեղ։

Ներկայումս հատկապես շատ կարևոր է խմելու և ոռոգման ջրագծերի, ինչպես նաև միջհամայնքային ճանապարհների վերանորոգումը։

Հնաբերդ գյուղը գտնվում է Ապարանից 15 կմ արևմուտք։ Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 57 կմ։ Մինչև 1995 թ. եղել է փոքրիկ ավան։

Գյուղից 2 կմ հեռավորության վրա գտնվում է Կըրխդայիրման կոչվող հնավայրը, որտեղ պահպանվում են մ.թ.ա. 8-7-րդ դարերին թվագրվող ամրոցի մնացորդները։

Գյուղն ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց, մանկապարտեզ և բուժկետ։ Համայնքի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է։ Սեփականաշնորհված հողերը կազմում են համայնքի ընդհանուր տարածքի շուրջ 57 %-ը։ Պահուստային

հողերից արոտավայրերը զբաղեցնում են 411 հա տարածք, վարելահողերը՝ 90 հա, խոտհարքերը՝ 20 հա: Գյուղերի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և կերային բույսերի մշակմամբ: Բացի այգեգործությունից նրանք զբաղվում են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Խմելու և ոռոգման ջրագծերի, միջհամայնքային ճանապարհների վերանորոգումը համայնքի համար շատ կարևոր են և համարվում են առաջնային հիմնախնդիրներ:

Աղյուսակ 1. Ապարանի աշխարհագրությունը

	Հեռավորությունը մարզկենտրոնից, կմ	Հեռավորությունը Ապարանից, կմ	Բարձրությունը ծովի մակարդակից, մ
Ապարան	32[4]	0	1,880
Արայի	13,5	15	1,850
Քուչակ	18	8	1,850
Լուսագյուղ	34	3.3	1,970
Հնաբերդ	57	15	2,150

2.2 Բնակլիմայական պայմաններն ու տատանումները. ազդեցությունը սոցիալ-տնտեսական վիճակի վրա

Կլիման պիլոտային տարածաշրջաններում բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են և ցուրտ՝ ծածկված ձյան մշտական և հաստ շերտով: Ամառները տաք են և համեմատաբար խոնավ: Հուլիսին միջին ջերմաստիճանը տատանվում է +16 - 18 ⁰C միջև: Տարեկան տեղումների քանակը կազմում է 450-600 միլիմետր[5] (մմ): Կլիմայական այս պայմաններ ընդհանուր են պիլոտային բոլոր համայնքների համար՝ միմյանցից կարճ հեռավորության վրա գտնվելու շնորհիվ: Բնական լանդշաֆտները սնահողային տափաստաններ են:



Նկար 2 Կլիման Ապարանի շրջանում

[4] Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 42 կմ է:
[5] Սիսիանի տարածաշրջանի կլիմայի բնութագրիչները զգալիորեն տարբերվում են ըստ առաջացման աղբյուրների, օրինակ տեղումների քանակը որոշ աղբյուրներում փոխվում է 25 -60 մմ սահմաններում և որոշ այլ աղբյուրներում՝400 - 560 մմ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության վրա կլիմայի ազդեցությանը, ապա Ապարանի և Արագածի տարածաշրջաններն ավելի նպաստավոր են մի քանի տեսակի հացահատիկների, կարտոֆիլի և բանջարաբոստանային բույսերի մշակման համար:

2.3 Հիմնական բնական պաշարները տարածաշրջանում

Արագածոտնի մարզը հարուստ է օգտակար հանածոներով, հատկապես շինանյութերով, ինչպիսիք են՝ տուֆը, բազալտը, կրաքարը, կավահողը, խարամը, պեմզան և պեռլիտը: Վերջինս կազմում է նախկին Խորհրդային Միության ողջ պաշարի 90%-ը և հաշվի առնելով իր որակական հատկությունները՝ համարվում է աշխարհում լավագույններից մեկը:

Այս մարզում են գտնվում նաև Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ) և Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները:

Ինչ վերաբերում է ջրային պաշարներին, դրանք գոյանում են Արագած լեռան ձնհալքից, տեղումներից և բնական աղբյուրներից:

Մարզի խոշոր գետերն են Քասաղը և Գեղաձորը: Կան նաև շատ հեղեղատարեր (ամենահայտնին Մաստարայի հեղեղատարն է):

Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի և Սաբունչիի ջրամբարները ևս գտնվում են այս մարզում:

2.4 Տարածքում բնական պաշարների պահպանմանը խոչընդոտող հիմնական գործոնները. ախտանշաններից մինչև պատճառների վերլուծություն

Ապարանի շրջանի Մելիքգյուղում կան ոսկու, սև տուֆի հանքեր, որոնք ներկայումս չեն շահագործվում:

Արայի գյուղում ամենամեծ խնդիրը զբաղվածությունն է: Կան տնային տնտեսություններ, որոնք բաղկացած են 9-10 անդամներից, որոնցից 5-6 չափահաս են, մինչդեռ կան տնային տնտեսություններ, որտեղ չափահասներից ոչ ոք չի աշխատում կամ աշխատում են, բայց նրանց վաստակածը բավարար չէ ընտանիքի բոլոր անդամների համար: Իհարկե սա ազդում է ընտանիքի վիճակի, ընտանեկան հարաբերությունների, կրթական մակարդակի և այլ ոլորտների վրա: Սա նաև հանգեցնում է հոգեբանական խնդիրների, ինչպիսիք են ինքնամփոփությունը և պասիվ ինտեգրացիան հասարակության մեջ: Իր հերթին սա բերում է լճացման կրթության ոլորտում, օրինակ՝ համայնքում կա միայն մեկ դպրոց (8-ամյա), և այն ավարտելուց հետո աշակերտների մեծ մասը չի ցանկանում շարունակել կրթությունը մեկ այլ տեղում:

Լուսագյուղում ևս առկա է զբաղվածության խնդիրը, որի պատճառով շատ մարդիկ ստիպված լքում են երկիրը: Սովետական շրջանում այստեղ կար հանրակացարան, որն այժմ չի գործում, բայց եթե այն սկսի աշխատել կրկին, 20-30 մարդ կարող է աշխատանք

ունենալ։

Գյուղի ոռոգման համակարգը գործում է 30 %-ով։ Համայնքում չկա հնձող մեքենա, գյուղացիները ստիպված են վարձել այն։

Հնաբերդը հարուստ է շինարարական ավազի և կավի պաշարներով, սակայն դրանք ընդհանրապես չեն շահագործվում։

Համայնքապետի խոսքերով դպրոցի շենքը կիսավեր է, ինչպես նաև անհրաժեշտ է մշակույթի տուն և բժշկական հաստատություններ։ Քիչ են արոտավայրերը, բավական է նշել գյուղում իրացման/վաճառքի խնդրի մասին, և մարդիկ հետաքրքրված չեն անասնապահության զարգացմամբ։

Ինչ վերաբերում է Քուչակ համայնքին, այստեղ կա մշակույթի տուն, որն ամբողջությամբ խարխլված է։ Վերանորոգումը սկսվել էր անցած տարի, բայց դադարեցվել էր, և միայն նոյեմբերի կեսից սկսված այդ գործընթացը կրկին շարունակվում է։ Գյուղն ունի 45 հա կավի հանք, որը, սակայն, ռացիոնալ կերպով՝ ի նպաստ համայնքի և շրջանի, չի շահագործվում։

Իհարկե արոտավայրերն ու հողի օգտագործումը մշտական և ընդհանուր հիմնախնդիր է հանրապետության բոլոր տարածքներում։

Վերջերս անասունների թիվը կտրուկ աճել է, և արոտավայրերի ոչ կանոնակարգված օգտագործումն ու տնօրինումը զգալի հարված են հասցրել բնական արոտավայրերին։ Արոտավայրերի չարաշահումը հանգեցրել է և՛ որակի, և՛ քանակի փոփոխության ու դեգրադացիայի։

Այսպիսով, տարրական անասնաբուծության հետևանքով առաջացած ռիսկերի ազդեցությունն էկոհամակարգերի վրա էապես աճել է։ Արդյունքում՝ ընդհանուր կենսաբազմազանությունը, կերային համակարգն ու անասնաբուծական արտադրանքը մեծապես վտանգված են, որն իր հերթին ընդհանուր առմամբ ազդում է բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի և եկամտի վրա։

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

3.1 Տարածաշրջանում տնտեսության զարգացած և զարգացող առանցքային ճյուղերը

2015 թ. ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի մասնաբաժինը հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմում է հետևյալը.

Գծապատկեր 1. Տնտեսության հիմնական ճյուղերն Արագածոտնի մարզում, մասնաբաժինը ՀՀ տարածքի մասշտաբով, %, 2015 թ.



Ինչպես երևում է վիճակագրական թվերից, տնտեսության ամենազարգացած ճյուղերն են գյուղատնտեսությունն ու շինարարությունը:

Արդյունաբերությունը: Արդյունաբերության հիմնական ճյուղն արտադրությունն է: Արագածոտնի մարզում, որպես արդյունաբերության զարգացած ենթաճյուղ, կարող ենք նշել սննդի, խմիչքի և տեքստիլի արտադրությունները, կարպետագործությունը:

Ստորև կարող եք գտնել մարզի արդյունաբերության մանրամասն նկարագիրը՝ ըստ տեսակների՝ արտահայտված միլիոն (մլն) դրամով:

Գծապատկեր 2. Արդյունաբերական ճյուղերն Արագածոտնի մարզում, մլն դրամ, %, 2015 թ.



Տեղեկատվության համար հետաքրքիր է դիտարկել Արագածոտնի մարզի արդյունաբերության դինամիկան Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ցուցանիշների հետ համեմատության մեջ.

Գծապատկեր 3. Արդյունաբերության ծավալի դինամիկան Սյունիքի մարզում, մլն դրամ



Գյուղատնտեսությունը: Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացված է հացահատիկային, բանջարաբոստանային բույսերի (հատկապես կարտոֆիլի) մշակման և անասնապահության մեջ:

Աղյուսակ 2. Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ծավալը և դրա տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, միլիարդ դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
Հայաստան	795.0	841.5	919.1	993.5	1001.2
Արագածոտն	76.8	86.0	89.2	98.8	100.0
Արագածոտն, %	***9.7 %***	***10.2 %***	***9.7 %***	***9.9 %***	***10.0 %***

Պիլոտային համայնքներում իրավիճակի ավելի օբյեկտիվ գնահատման համար անասնապահության վերաբերյալ գրանցամատյաններ են տրամադրվել և մանրամասն ուսումնասիրվել: Այնուամենայնիվ, գործնականում համայնքապետարանում հաճախ չեն տիրապետում այս կամ այն համապատասխան տեղեկատվության միևնույն ֆորմատով՝ գրավոր կամ փաստաթղթային տեսքով: Այսպիսով, գյուղատնտեսության և գյուղական համայնքների կենցաղի վերաբերյալ տեղեկությունների հետագա վերլուծություններում ոչ բոլոր տվյալներն են ստանդարտացված, և դեռևս կան պակաս կամ լիովին չհաստատված տվյալներ:

Ստորև ներկայացված աղյուսակում դուք կարող եք տեսնել պիլոտային համայնքներում անասունների ընդհանուր բաշխվածությունն՝ ըստ դրանում ներառված կենդանիների ու թռչունների տեսակների:

Աղյուսակ 3. Ապարանի շրջան, կենդանիներ, 2016 թ.

	Խոշոր եղջերավոր անասուն	Մանր եղջերավոր անասուն	Այծեր	Խոզեր	Ձիեր	Ճագարներ	Թռչուններ	Մորթատու կենդանի ներ	Մեղվընտանիքներ	Էշեր	Ջորիներ	Գոմեշներ
Արայի	895	866[6]	-	106	8	26	968	0	194	2[7]	-	-
Լուսագյուղ	663	906	46	44	3	15	1,123	0	100	0	0	0
Հնաբերդ	1,612	2,324	12	173	5	0	2,558	0	244	4	0	0
Քուչակ	1,867	767	48	58	8	49	3,580	0	134	0	0	0
Ընդհանուր	5,037	4,863	106	381	24	90	8,229	0	672	6	0	0

Ինչպես տեսնում եք աղյուսակում, մանր և խոշոր եղջերավոր անասունները կարևոր նշանակություն ունեն պիլոտային համայնքներում և, հետևաբար, գյուղացիների ապրուստի հիմնական աղբյուրն են: Աղյուսակից երևում է, որ թռչնաբուծությունը ևս մեծ մասշտաբների է հասնում այստեղ:

[6] Ներառյալ այծեր
[7] Ներառյալ ջորիներ

Վերոհիշյալ կենդանիների որոշ տեսակներ պետք է առանձին դիտարկվեն՝ հաշվի առնելով դրանց դերը, եկամտաբերությունն ու տնտեսական նշանակությունը: Օրինակ՝ երկարաժամկետ նպատակների իրագործման համար օգտակար է վերլուծել, թե որքան է անասնաբուծության հետագա զարգացման և եկամտի ավելացման ներուժը: Ուստի այստեղ պետք է ուշադրություն դարձնենք կաթնատու կովերին, արտադրություն ապահովող ցուլերին, հավերին և այլն: Ստորև ներկայացված տվյալները հստակ ցույց են տալիս այս ներուժը.

Գծապատկեր 4. Արտադրական նշանակության կենդանիներ, 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ



Արժեքավոր է դիտարկել գյուղատնտեսական արտադրանքի ծավալը ՀՀ ցուցանիշների հետ համեմատության մեջ:

Արագածոտնի մարզի անասնաբուծական արտադրանքի ծավալը ներկայացված է այստեղ.

Աղյուսակ 4. Կենդանական ծագման արտադրանք, Արագածոտնի մարզ, 2016 թ.

	Քանակը, հազար գլուխ		Արագածոտնի մարզի կենդանիների տեսակարար կշիռը ՀՀ մասշտաբով, 2016 թ.
Արտադրանք	**Արագածոտն**	**ՀՀ**	**%**
Անասունների և թռչունների միս սպանդային քաշով, հազար տոննա	17.9	176.1	10.2%
Կաթ, հազար տոննա	88.2	728.6	12.1%
Ձվեր, մլն հատ	61.5	659.8	9.3%
Բուրդ, տոննա	218	1,571	13.9%

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության 3 ավտոխճուղիներ՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ, Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի: Մարզի տարածքով է անցնում նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով, այսպիսով այն ոչ մի էական ազդեցություն չի ունենում մարզի տնտեսական զարգացման վրա):

Համայնքներում պաշտոնական հանգամանալից տվյալների բացակայության պայմաններում, մենք ստիպված ենք ավելի լայն մասշտաբով դիտարկել շինարարությունը, մանրածախ առևտուրն ու ծառայությունները՝ Արագածոտնի մարզի դինամիկան համեմատելով ՀՀ արդյունքների հետ:

Աղյուսակ 5. Շինարարության տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
Հայաստան	504,824.5	479,415.6	453,449.3	463,858.0	481,496.9
Արագածոտն	13,059.9	23,664.3	13,053.9	13,373.9	17,963.3
Արագածոտն %	**2.6%**	**4.9%**	**2.9%**	**2.9%**	**3.7%**

Աղյուսակ 6. Մանրածախ առևտրի տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
Հայաստան	1,302,252.1	1,379,500.3	452,528.3	1,466,090.6	1,313,998.1
Արագածոտն	10,418.6	12,170.8	14,558.3	17,016.2	16,778.8
Արագածոտն %	**0.8%**	**0.9%**	**3.2%**	**1.2%**	**1.3%**

Աղյուսակ 7. Ծառայությունների տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
Հայաստան	840,033.4	941,280.0	988,158.3	1,090,528.6	1,144,605.3
Արագածոտն	7,413.6	8,169.1	9,343.3	8,872.7	9,185.0
Արագածոտն, %	**0.9%**	**0.9%**	**0.9%**	**0.8%**	**0.8%**

Ինչ վերաբերում է մանրածախ առևտրին, վերջին վիճակագրությունը մարզի վաճառքի հետևյալ պատկերն է ցույց տալիս:

Աղյուսակ 8. Մանրածախ առևտրի կետեր, քանակն Արագածոտնի մարզում

	2011	2012	2013	2014	2015
Խանութներ	134	127	128	190	250
Կրպակներ	229	238	238	243	251
Գյուղմթերքի շուկաներ	3	2	2	2	2
Սպառողական ապրանքի շուկաներ	1	1	1	2	2
Մանրածախ առևտրի այլ կետեր	63	67	68	69	57
Մանրածախ առևտրի կետերի ընդհանուր թիվը	**430**	**435**	**437**	**506**	**562**

Աչքի անցկացնելով Արագածոտնի մարզում մատուցված ծառայությունների տեսակների և ուղղությունների բաշխվածությունը՝ արժե նշել, որ այստեղ ընդհանուր շրջանառության ամենամեծ մասնաբաժինը պատկանում է ֆինանսական և ապահովագրական ոլորտին, ինչպես նաև տրանսպորտային ծառայություններին:

Գծապատկեր 5. 2016 թ. դրությամբ Արագածոտնի մարզում ծառայությունների բաշխումը՝ ըստ տեսակների, մլն դրամ և %



Արագածոտնի մարզի արտահանումը 2015 թ. կազմել է 6,836.4 մլն դրամ (ՀՀ ընդհանուր արտահանման միայն 0,96 %-ը), ՀՀ ընդհանուր արտահանումը 705,116.8 մլն դրամ է:

Աղյուսակ 9. Արտահանման ծավալն ու տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում[8], մլն դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
Հայաստան	489,032.3	550,560.0	594,392.0	632,840.4	705,116.8
Արագածոտն	7,774.5	5,022.6	17,562.5	21,307.5	14,311.3
Արագածոտն, %	**1.6%**	**0.9%**	**1.2%**	**1.4%**	**1.0%**

Արագածոտնի մարզի ներկրման չափը 2015 թ. կազմել է 21,826.3 մլն դրամ, ՀՀ ընդհանուր ներկրումը 1,500,295.3 մլն դրամ է:

Աղյուսակ 10. Ներկրման ծավալն ու տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
Հայաստան	1,482,396.3	1,638,843.6	1,705,848.2	1,735,308.6	1,500,295.3
Արագածոտն	19,358.0	20,904.7	30,634.5	32,040.6	21,826.3
Արագածոտն, %	**1.3%**	**1.3%**	**1.8%**	**1.8%**	**1.5%**

Համեմատելով Արագածոտնի մարզի տնտեսության կարևոր ցուցանիշները ՀՀ ցուցանիշների հետ վիճակագրորեն՝ մենք նկատում ենք, որ Արագածոտնի մարզում 2015 թ. սպառողական գների ինդեքսը, 2014 թ. հետ համեմատած, կազմել է 103.8 %, որից պարենային ապրանքների (ներառյալ ծխախոտի և ալկոհոլի) 2015թ. սպառողական գների ինդեքսը, 2014 թ. Համեմատ, կազմում է 104.2 %՝ Արագածոտնի մարզը հասցնելով հանրապետության մասշտաբով առաջին հորիզոնական:

2014 թ. հետ համեմատած՝ ոչ պարենային ապրանքների ինդեքսը 2015 թ. Արագածոտնի մարզում կազմել է 102.5 %: Բնակչությանը մատուցված ծառայությունների սակագնային ինդեքսն այստեղ 2014 թ. համեմատությամբ 2015 թ. կազմել է 102.5 %:

3.2 Ժողովրդագրություն, կրթություն, աշխատանք, արտագաղթ, կենսամակարդակ, եկամուտ և ծախսեր, ապրուստի և գոյատևման համար անհրաժեշտ բնական պաշարներից կախվածություն, էներգիայի աղբյուրներ և հարակից ոլորտներ (համակցված վիճակագրություն վերստուգված փաստացի տվյալների հիման վրա)

Ժողովրդագրություն: Ապարանի տարածաշրջանը համարելով որպես ընթացիկ ուսումնասիրության կենտրոն՝ դիտարկենք դրա բնակչության ընդհանուր նկարագիրն ու դինամիկան 2011-2016 թթ. ընթացքում (ներառյալ Ապարան քաղաքը[9]):

[8] Ներառված չէ ֆիզիկական անձանց առևտուրը

[9] Հետագա տվյալները կարող են հիմնված լինել հիմնականում Պիլոտային համայնքների վրա՝ չներառելով Ապարան քաղաքը:

Գծապատկեր 6. Բնակչության դինամիկան, 2011 – 2016 թթ.



	Ապարան	Արայի	Լուսագյուղ	Հնաբերդ	Քուչակ
2011	6,679	645	900	2,309	2,515
2012	6,724	645	910	2,318	2,253
2013	6,469	649	936	2,267	2,281
2014	6,456	650	944	2,286	2,265
2015	6,413	653	876	2,305	2,270
2016	6,291	658	874	2,321	2,285

Արժե նշել, որ դինամիկայի պատկերը կազմված է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տվյալների հիման վրա, որտեղ աննշան տարբերություններ[10] կարող են նկատվել՝ անմիջապես համայնքներից ստացված հիմնական տվյալների հետ համեմատած:

Պիլոտային համայնքներում տնային տնտեսությունների թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են երկու չափանիշներով՝ տեղեկություն տրամադրելով յուրաքանչյուր համայնքում գրանցված և իրականում առկա տնային տնտեսությունների ընդհանուր թվի մասին: Այս տվյալները նաև հիմնված են առաջնային աղբյուրների վրա, ինչպես օրինակ՝ ընդգրկված համայնքների և բնակավայրերի վերջին թարմացված գրանցացուցակները:

[10] Բնակչության թիվը երբեմն տարբերվում է, որը կարող է բացատրվել համայնքային գրանցամատյանում չթարմացվող և երբեմն էլ սխալ հաշվարկներով:

Գծապատկեր 7. Տնային տնտեսությունների թիվը պիլոտային համայնքներում 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ[11]



Ժողովրդագրական պատկերը դիտարկելիս նաև հետաքրքիր է աչքի անցկացնել յուրաքանչյուր համայնքնում տարիքային և սեռային խմբերը, որը կարող է օգտակար լինել այստեղ մեկնարկվող ցանկացած ծրագրի թիրախավորված գործունեության ներուժը գնահատելու և բաշխելու գործում: Տեղեկատվությունը ներկայացված է տոկոսներով՝ բնակչության ընդհանուր թվի հաշվարկով:

Աղյուսակ 11. Ժողովրդագրությունը պիլոտային համայնքներում, տարիքային և սեռային խմբերը, 2016 թ.

Ընդհանուր բնակչության միջից	Աշխատունակ տարիքից ցածր, %	Աշխատունակ տարիքի, %	Աշխատունակ տարիքից բարձր, %	Արական	Իգական
Արայի	24	51	25	51	49
Լուսագյուղ	25	63	12	48	52
Հնաբերդ	36	52	12	48	52
Քուչակ	27	62	11	49	51
Ընդհանուր	100 %	100 %	100 %	100 %	100 %

Կրթություն: Ինչ վերաբերում է կրթությանը, ապա տարածաշրջանում գործում են միջնակարգ դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի տներ, գրադարաններ և երաժշտական ու արվեստի դպրոցներ, որոնց մեծ մասը հիմնանորոգման կարիք ունի (ինչպես արդեն ներկայացվել է «Շրջակա միջավայրը» գլխում): Այստեղ ևս ունենք Արագածոտնի մարզի ամբողջական նկարագիրը, որտեղ ներկայացված են կրթական

[11] Համաձայն Արագածոտնի մարզի պաշտոնական վեբ-կայքի

հաստատությունների բաշխումն՝ ըստ իրենց տեսակների, միջնակարգ դպրոցների հիմնական տվյալները և բարձրագույն կրթության քանակական տվյալները՝ ՀՀ ընդհանուր թվի համեմատությամբ։

Աղյուսակ 12. Միջնակարգ դպրոցները, Արագածոտնի մարզի հաճախելիության մակարդակը, 2015/2016 ուսումնական տարի

	Արագածոտնի մարզ	ՀՀ	Համեմատություն %
Աշակերտների քանակը դպրոցներում	17,355.0	364,398.0	4.8%
Հաճախելիության միջին մակարդակը դպրոցներում	142.3	253.4	56.2%
Ընդհանուր/զուգահեռ դասարանների թիվը մեկ դպրոցի հաշվով	11.8	13.9	84.9%
Հաճախելիության միջին մակարդակը դասարաններում	12.0	18.2	65.9%
Աշակերտների թիվը մեկ մանկավարժի հաշվով	6.1	9.4	64.9%
Մանկավարժների թիվը մեկ դպրոցի հաշվով	23.2	26.9	86.2%

Բարձրագույն կրթության հետ կապված՝ հարկ է նշել, որ Արագածոտնի մարզում չկան բարձրագույն կրթական հաստատություններ։ Մենք նաև պետք է ուշադրություն դարձնենք մարզի մշակութային կյանքին, վարք ու բարքին և միտումներին՝ բնակչության կրթական մակարդակի և սոցիալ-տնտեսական ակտիվության գլխավոր ցուցանիշները քննարկելիս։

Ցավոք, մարզում չկա ոչ մի թատրոն։

Արագածոտնի մարզում գրադարանային հաճախելիության թիվն ամեն 10,00 մարդու հաշվով 2015 թ. կազմել է 1,288.7 մարդ, որը ցածր է ՀՀ միջին ցուցանիշից (1,621.7 մարդ)։

Արագածոտնի մարզում մարմնամարզիկների թիվը սպորտային հաստատություններում 2015 թ. կազմել է 42,1 մարդ 10 000 բնակչության հաշվով, որը կրկին 3 անգամ ավելի ցածր ,է քան ՀՀ միջին ցուցանիշը (136.8 մարդ)։

Զբաղվածություն։ Գործնականում պիլոտային համայնքներում զբաղվածության զգալի տոկոսը կազմում է գյուղատնտեսական գործունեությունը։ Այնուամենայնիվ, հետաքրքիր կլինի դիտարկել ամբողջ մարզի այնպիսի կարևոր ցուցանիշների ընդհանուր պատկերը, ինչպիսիք են գործազրկության մակարդակն ու միջին ամսական անվանական

աշխատավարձը: Այստեղ նույնպես պատկերը ստանալու և ՀՀ ցուցանիշների հետ համեմատելու համար օգնության է հասնում վիճակագրությունը[12]:

Աղյուսակ 13. Գործազրկության մակարդակն Արագածոտնի մարզում՝ ըստ սեռի, %, 2014-15 թթ.

	2013			2014			2015		
	Արական	Իգական	Ընդհանուր	Արական	Իգական	Ընդհանուր	Արական	Իգական	Ընդհանուր
ՀՀ	14,4	17.6	18.5	15.8	19.5	17.6	17.6	19.5	18.5
Արագածոտնի մարզ	2.0	4.3	3.3	2.3	7.7	5.1	1.6	10.0	5.7

Հետաքրքիր է դիտարկել 2013-2015 թթ. միջին ամսական անվանական աշխատավարձի դինամիկան Հայաստանում և Արագածոտնի մարզում:

Գծապատկեր 8. Միջին ամսական անվանական աշխատավարձն Արագածոտնի մարզում, դրամ, 2013 – 2015 թթ.



Արտագաղթ: Արտագաղթի հիմնախնդիրների վերաբերյալ հիմնական տվյալները ստացվել են անմիջապես համայնքի ղեկավարների հետ հարցազրույցներից: Համաձայն նրանց դիտարկումների՝ գրեթե բոլոր համայնքներում արտագաղթի տոկոսը բավականին բարձր է: Միակ մեղմացուցիչ հանգամանքն այստեղ այն է, որ դա սեզոնային բնույթ է կրում, և գրեթե ամեն ձմեռ նրանք վերադառնում են հայրենիք: Նույն դիտարկումներից նաև պարզ է դառնում, որ զբաղվածության կամ ինքնազբաղվածության գլխավոր հնարավորությունը համայնքների մեծ մասում անասնապահությունն ու

[12] Հայտնի են միայն 2014 և 2015 թթ. տվյալները:

երկրագործությունն է՝ վերամշակման ենթարկող փոքր ծավալների ձեռնարկությունների և չգործող զբոսաշրջային ծառայությունների հետ միասին։

Աղյուսակ 14. Արտագաղթն՝ ըստ ծավալի, նպատակի, ուղղվածության և համայնքների հնարավորությունները, 2016 թ.

	Արտագաղթի մակարդակը	Արտագաղթի ուղղությունները	Արտագաղթի ծավալը,մարդիկ	Արտագաղթի նպատակը	Հնարավորությունները գյուղում
Ապարան	Բարձր	Տարբեր	1,000, սեզոնային	Արտագնա աշխատանք	Սննդամթերքի և ըմպելիքի ձեռնարկություններ
Արայի	Հ/Չ[13]				
Լուսագյուղ	Բարձր	Տարբեր	~25 %, սեզոնային, 30 մարդ դեպի Երևան	Արտագնա աշխատանք	Հողագործություն և անասնապահություն, զբոսաշրջություն
Հնաբերդ	Բարձր	Ռուսաստան	50 % տղամարդկանցից, սեզոնային	Արտագնա աշխատանք	Հողագործություն և անասնապահություն
Քուչակ	Բարձր	Տարբեր	320 մարդ, սեզոնային, որից 70-ը Երևան	Արտագնա աշխատանք	Հողագործություն և անասնապահություն, վերամշակման ենթարկող ձեռնարկություններ

Բնակչության կենսամակարդակ, աղքատության մակարդակ: Հաշվի առնելով բնակչության կենսամակարդակը՝ մարզի աղքատության մակարդակի[14] իմացությունը կարևոր է:

Աղյուսակ 15. Արագածոտնի մարզի աղքատության մակարդակը՝ համեմատած հանրապետությունում առկա միջին ցուցանիշի հետ, %, 2012 – 2015 թթ.

	2012			2013			2014				2015	
	Աղքատեն	Ծայրահեղ աղքատեն	Աղքատչեն	Աղքատեն	Ծայրահեղ աղքատեն	Աղքատչեն	Աղքատեն	Ծայրահեղ աղքատեն	Աղքատչեն	Աղքատեն	Ծայրահեղ աղքատեն	Աղքատչեն
Հանրապետական միջին ցուցանիշը	32.4	2.8	67.6	32.0	2.7	68.0	30.0	2.3	70.0	29.8	2.0	70.2
Արագածոտնի մարզ	21.2	0.9	78.8	22.7	1.1	77.3	18.7	0.5	81.3	16.1	0.4	83.9

[13]Տեղեկությունը հասանելի չէ:

[14] 2015 թ. հաշվետու տարվա տվյալները բացակայում են:

Արժե նշել նաև, որ գյուղական համայնքների զգալի մասն իր ապրուստը վաստակում է գյուղմթերքի վաճառքից: Քանի որ պաշտոնապես գրանցված ոչ մի թիվ և/կամ դրա հետ կապված տվյալ հնարավոր չէր պարզել սկզբնական կամ երկրորդական աղբյուրներից, դիտարկենք Արագածոտնի մարզի մեկ շնչի հաշվով եկամուտների բաշխումն՝ ըստ դրանց աղբյուրների՝ վերջին վիճակագրական տվյալներով:

Աղյուսակ 16. Արագածոտնի մարզ, եկամուտի աղբյուրներ՝ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, դրամ, 2015 թ.

	Զբաղվածություն	Ինքնազբաղվածություն	Գյուղմթերքի և անասունների վաճառք	Սեփականություն (վարձավճարներ, տոկոսադրույքներ, շահութամասեր)	Պետական և այլ նպաստներ	Տրանսֆերներ	Այլ եկամուտներ	Ընդհ.
Հանրապետական միջին ցուցանիշ	28,800.0	4,842.0	2,674.0	115.0	9,284.0	4,698.0	1,964.0	52,377.0
Արագածոտնի մարզ	27,206.0	1,440.0	16,578.0	117.0	10,377.0	13,510.0	428.0	69,656.0

Այստեղ մենք տեսնում ենք, որ աշխատավարձերն ու գյուղմթերքի վաճառքը, տրանսֆերներն ու նպաստները բնակչության մշտական ընդհանուր եկամտի զգալի մասն են կազմում:

Տվյալները հավաքվել են Արագածոտնի մարզի տնային տնտեսությունների ամեն տարի կատարվող լայնամասշտաբ հետազոտության շրջանակում, որը կազմակերպվել և իրականացվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և ուղարկվել Ազգային վիճակագրական ծառայությանը:

Գծապատկեր 9. Արագածոտնի մարզ, եկամտի բաշխում մեկ շնչի հաշվով, 2015 թ.



3.3 Ոլորտում գործող հաստատությունները

Ապարանում առկա է կաթի վերամշակման 5 կետ։ «Գնթունիք» հացաբուլկեղենի խանութն ինտենսիվորեն գործում է՝ ապահովելով աշխատանք 150-200 մարդու համար։ Քաղաքում կա նաև հացի արտադրամաս։

Այստեղ կար ֆիզիկայի ու մաթեմատիկայի ուղղվածությամբ քոլեջ, որն ավելի ուշ դարձավ ռազմական վարժարան, սակայն կրկին հաջողություն չունեցավ։ Այժմ նախատեսված է այստեղ հիմնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություն։

Արայի համայնքում կա կանանց 15 հոգուց բաղկացած մի խումբ, որը զբաղված է ազնվամորու արտադրությամբ (մշակում, հավաքում և այլն)։ Խումբը ստեղծվել և գործում է 2012 թ. «Կանաչ արահետ» ՀԿ-ի նախաձեռնությամբ։

Վերջինս առաջին անգամ մշակեց ազնվամորին լարի և սյան մեթոդով։ Ծրագիրը մեծապես նպաստում է կանանց զբաղվածության աճին։ Հեղինե Կիրակոսյանը խմբի համակարգողն է, ով նաև Արայի համայնքապետարանի անձնակազմի ղեկավարն է։

Լուսագյուղում առկա է 2000 մ^2 տարածք զբաղեցնող ծառերի տնկարան, որտեղից մատղաշ տնկիներ են դուրս բերվում՝ համայնքում ծառապատման ծրագրին աջակցելու համար։

Սովետական ժամանակահատվածում համայնքում կար հանրակացարան (զբոսաշրջային կենտրոն), որը ներկայումս չի գործում և կարող էր ստեղծել 20-30 աշխատատեղ։

Գյուղում կա պարուսուցման խմբակ, որը չունի բավարար պայմաններ ներկայիս ակտիվ գործունեության համար և բարելավման կարիք ունի։

Այստեղ առկա են շինարարական ավազի ու կավի պաշարներ, որոնք ինչպես հարկն է չեն օգտագործվում։

«Կանաչ արահետ» կազմակերպության ազնվամորու մշակման ծրագիրը փորձարկվել է նաև Քուչակ համայնքում, որտեղ ստեղծվել է 7 կանանցից բաղկացած մի խումբ։ Սակայն ազնվամորու տեսակը համապատասխան չէր այս տարածքին ու ծրագիրը հաջողություն չունեցավ այստեղ։

Համայնքում չկա մսի վերամշակման գործարան, ինչ վերաբերում է կաթին՝ «Աշտարակ կաթ» ընկերությունն էր հավաքում այն, իսկ ներկայումս այդ գործը կատարում է «Հարթավան կաթ» կոոպերատիվը։

Համայնքի 45 հա տարածքը զբաղեցնում է կավի հանքը։ 2010 թ. դրա նմուշը որպես հումք պետք է տարվեր Կարբի գյուղ, սակայն ծրագիրը դադարեցվեց։

4. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

4.1 Հողի տեսակները և օգտագործման ուղղությունները: Ընդհանուր նկարագիր և քարտեզագրում

Քանի որ Ապարանի տարածաշրջանը՝ պիլոտային համայնքներով հանդերձ, գտնվում է ծովի մակարդակից 1,800-2,100 մ բարձրության վրա (հարաբերական բարձրությունը), այստեղ կարելի է գտնել սևահողի 9 տեսակ, որոնք հիմնականում հարուստ են օրգանական նյութերով (4.9 – 7.5 %), և պատկանում են ջրակլանման բարձր մակարդակ ունեցող տեսակին: Այստեղ գերակշռում է բաց շագանակագույն հողը, իսկ ավելի բարձր բնավայրերում տարածված են լեռնային սևահողերը, որոնք առանձնանում են ծագումնաբանական հորիզոնների լավ զատորոշմամբ, հզոր պրոֆիլով, վերին շերտերը հարուստ են հումուսով (4-11%):

Գծապատկեր 10: Գյուղատնտեսական նշանակության հողեր, Արագածոտնի մարզ, հա, 2016 թ.



Մարզի համար հատուկ կարևորություն ունեն գյուղատնտեսական հողերը, որոնք հողային բոլոր տեսակների ընդհանուր ծավալում զգալի մաս են կազմում: Հողային պաշարներն ու պիլոտային համայնքներում դրանց շահագործման բաշխվածությունն իմանալու համար կիրառվել են և՛ վիճակագրական տվյալներ, և՛ համայնքապետարանից ստացված առաջնային տվյալներ: Ըստ այս համատեղ տվյալների՝ տարածաշրջանի հողերը զբաղեցնում են Աղյուսակ 17-ում ներկայացված տարածքները: Ավելի հեշտ հասկանալու համար քաղաքային ու գյուղական հողերի տարբերությունը՝ Ապարան քաղաքի հողերը ևս ներառված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 17. Գյուղատնտեսական հողերի բաժանումն Ապարանում և պիլոտային համայնքներում՝ ըստ դրանց օգտագործման և տեսակների, հա, 2015 թ.

Համայնքներ	Վարելահողեր	Խոտհարքեր	Արոտավայրեր
Ապարան քաղաք	38	-[15]	415
Արայի	-	-	290
Լուսագյուղ	25	-	414
Հնաբերդ	90	20	411
Քուչակ	120	-	392
Ընդհանուր	210	20	803

4.2 Բուսականությունը տարածաշրջանում՝ կախված դրանց տեսակներից և օգտագործման ազդեցություններից (ներառյալ լուսանկարները)



Նկար 3 Բուսական ծածկույթի և արեալների տարբեր տեսակների բաշխումը Հայաստանում

Բուսական ծածկն Արագածոտնի մարզում հիմնականում բաղկացած է կիսաանապատային տարածքներից՝ օշինդրի իր տեսակներով, տափաստանային խոտածածկից, մարգագետնատափաստաններից, ենթալպյան և ալպյան մարգագետիններից: Ապարանի շրջանը հիմնականում գտնվում է բուսական ծածկույթի մարգագետնատափաստանային և ենթալպյան մարգագետինների գոտում:

Հատկապես կարևոր է իմանալ գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է գյուղատնտեսական հողերի բաշխումն՝ ըստ դրանց բերքատվության և արտադրանքի:

[15] Առաջնային և երկրորդական աղբյուրներից ոչ մի տվյալ հասանելի չէ:

Աղյուսակ 18. Հողի օգտագործման տեսակներն՝ ըստ գյուղատնտեսական արտադրանքի, Արագածոտնի մարզ, 2015 թ.

	Վարելահողեր, հա		**Միջին բերքատվությունը, ց/հա**		**Համախառն բերքը, հազար տոննա**		**Արագածոտնի մարզի մասնաբաժինը ՀՀ համախառն բերքի ծավալում, %, 2015 թ.**	
	Արագածոտնի մարզ	ՀՀ	Արագածոտնի մարզ	ՀՀ	Արագածոտնի մարզ	ՀՀ	Արագածոտնի մարզ	ՀՀ
Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի բերք	28,563.0	201,254.0	31.8	31.8	90.8	637.9	14.2%	100.0%
Կարտոֆիլի բերք	1,729.0	33,306.0	265.0	228.9	45.8	764.5	6.0%	100.0%
Բանջարանոցային մշակաբույսերի բերք	1,107.0	29,078.0	316.2	334.7	40.4	10,031.5	0.4%	100.0%
Բոստանային մշակաբույսերի բերք	233.0	6,782.0	390.6	423.4	9.1	286.8	3.2%	100.0%
Պտուղների և հատապտուղների տնկարկներ	6,617.0	40,582.0	162.8	104.7	95.6	386.5	24.7%	100.0%
Խաղող	1,699.0	17,296.0	106.5	188.2	17.9	309.2	5.8%	100.0%

4.3 Ոլորտում նշանակալի փոփոխությունները

Արոտավայրերի և անտառային տարածքների անկանոն օգտագործումը հանգեցնում է էրոզիայի, դեգրադացիայի, անապատացման և կենսաբազմազանության անհետացմանը Հարավային Կովկասի բարձր լեռնային շրջաններում (գլխավոր հիմնախնդիրը)։

Տեղի բնակչությունը, որն օգտագործում է համայնքային կառավարման հողերի բնական պաշարները, թիրախային հիմնական խումբն է։ Հատուկ ուշադրություն կդարձվի անասնապահներին և հովիվներին, վարձակալ աղքատ հողագործներին և կանանց։

Արոտավայրերի ոռոգումը սկսվել է 2016 թ. Ապարան համայնքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (CARMAC) ծրագրի շրջանակներում, որը 80%-ով ֆինանսավորվում է կառավարության կողմից, 20%-ով՝ համայնքի։ Առաջին փուլը մեկնարկել է 2016 թ□-ին, իսկ երկրորդ փուլը նախատեսված է իրականացնել առաջիկա տարում։ Նույն ծրագրի շրջանակում ձեռք են բերվել նաև գյուղատնտեսական մեքենաներ (2 տրակտոր), և այժմ նրանք կարող են հողը վարել 30000 դրամով՝ նախկին 35000-40000 դրամի փոխարեն, երբ ստիպված վարձակալում էին սարքավորումն այլ վայրերից/մատակարարներից։ Համապատասխանաբար բարձրացել է գործընթացի արդյունավետությունը։ Օրինակ՝ եթե նախկինում վարում էին 35-40 հա հող, ապա ներկայումս հասնում է 80 հա (չնայած ընդհանուր տարածքը 700 հա է)։

Լուսագյուղ համայնքը մտնում է անտառապատման և էրոզիայի վերահսկման ծրագրի մեջ, և արդեն լավ արդյունքներ են ցույց տալիս այս առումով։

Հողի էրոզիայի վերահսկման ծրագրերը ներառում են նաև Հնաբերդ համայնքը, շոշափելի փոփոխություններ են նկատվում հատուկ միջամտությունների շնորհիվ։ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակում արոտավայրերից օգտվողների գործընկերություն է ստեղծվել Արայի համայնքում։ Շուրջ 61 տնային տնտեսություն է ներգրավված այդ գործընկերությունում։



Նկար 4 «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիր՝ ԳՄՀԸ կողմից, ծրագրի տարածքը

4.4 Առկա օրենքներն ու իրավական կարգավորումները. ուժեղ և թույլ կողմերը, լրացման ենթակա շոշափելի բացթողումները

ՀՀ-ում Հողային օրենսգիրքն ընդունվել է 2001 թ□ մայիսին, և մինչ այսօր գործել է աննշան բարելավումներով ու փոփոխություններով: Ավելի ուշ՝ 2008 թ□ ապրիլին, ընդունվել և ներկայումս գործում է <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքը :

1994 թ□-ից գործում է նաև ՀՀ օրենքը <<Հողի հարկի մասին>>՝ ուղղված հողի սեփականատերերի, պետական հողերի մշտական և ժամանակավոր հողօգտագործողների իրավունքների կարգավորմանը: Հարկի դրույքաչափը կախված չէ հողօգտագործումից ստացված եկամտի չափից և գերազանցապես որոշվում է բնակավայրի տեսակով, տեղակայման դիրքով և արտադրական կարևորությունով:

Հողը հիմնականում պատկանում և կառավարվում է համայնքապետարանի կողմից: Անտառները պատկանում են պետությանը և տնօրինվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ Կառավարության որոշումն արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին հաստատում է Հայաստանում արոտավայրերի ու խոտհարքների օգտագործման կարգը: Վերջինս մշակվել է հիմնականում բազմամյա հետազոտական և վերլուծական տվյալների հիման վրա, ինչպես նաև՝ մասնակի մոնիտորինգի արդյունքների շնորհիվ: Այստեղ տեղին է հիշատակել, որ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված և արդեն իսկ հիշատակված գործընթացներն ու զբաղմունքները ոչ միշտ են արդարացված՝ մի պարզ պատճառով, որ մինչ օրս տարբեր բնական գոտիներում արոտավայրերի վիճակն ու դեգրադացիայի աստիճանը նախկինում երբեք հստակորեն չի գնահատվել, գրանցվել և բացատրվել: Արոտավայրերի վիճակի գնահատումը (օրինակ՝ մոնիտորինգը) մեկն է այն գործընթացներից, որն անհրաժեշտ է արոտավայրերի արդյունավետ կառավարման համար երաշխիքների և հնարավորությունների ապահովման համար:

5. ՊԻԼՈՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԸ

5.1 Բնական պաշարների, ինչպես օրինակ բնական անտառների, արոտավայրերի, ջրային պաշարների քարտեզագրում. ընդհանուր նկարագիրը և վտանգները

Ինչպես նշված է վերևում, ծրագրի տարածքի հիմնական բնական և կիսաբնական հաբիտատներն են հանդիսանում հետևյալները՝ լեռնային տափաստաններ, մարգագետնատափաստաններ, ենթալպյան մարգագետիններ, ալպյան մարգագետիններ և գորգեր, անտառային փոքր տարածություններ, ներզոնալ էկոհամակարգեր՝ ջրաճահճային տարածքներ և պետրոֆիլ հաբիտատներ, ինչպես նաև ռուդերալ (խախտված) հաբիտատներ: Տափաստանները և մարգագետինները աճելավայրերի ամենատարածված տեսակներն են:

Անտառներ. Անտառները հանդիպում են հիմնականում փոքր անտառային տարածություններում: Գերիշխող ծառատեսակներ են կաղնին, թխկին, բոխին և այլն:

Տարածաշրջանի հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող կենդանական և բուսական տեսակները 58-ն են և ընդգրկված են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում (Թամանյան, 2010 թվական, Աղասյան, Քալաշյան, 2010 թվական): Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևի մեջ ընդգրկված է 14 տեսակ, որոնց թվին են պատկանում գայլը, գորշ արջը և չղջիկների որոշ տեսակներ:

Հայաստանի անկախության առաջին տարիների էներգետիկ ճգնաժամը բավականին բացասական ազդեցություն է թողել շրջակա միջավայրի, հատկապես անտառների վրա: Այդ ժամանակ թե՛ գյուղական, և թե՛ քաղաքային բնակչությունն առավելապես այրում էր անտառային փայտ: Թեև նոր դարաշրջանի սկզբին և դրանից հետո բնական գազի մատակարարման վերսկսումը կանխեց անտառներից վառելափայտի օգտագործումը, բայց, այնուամենայնիվ, անտառների ընդգրկած ընդհանուր տարածքն էականորեն նվազեց՝ հասնելով պետության տարածքի 8-9%-ին:

2004 թ-ից ի վեր Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության վերահսկողության ներքո անտառներում և անտառային հողերում իրականացվել են անտառների կառավարման գործընթացներ, որոնք նպատակ ունեին սահմանելու անտառային տարածքները և անտառածածկ հողերը, անտառային պաշարները, ինչպես նաև պլանավորելու անտառային կառավարման գործընթացն առաջիկա 10 տարիների համար: Վերը նշված գործողությունների արդյունքում Իջևանի, Սևքարի, Նոյեմբերյանի, Արծվաբերդի, Սյունիքի, Կապանի, Սիսիանի, Ճամբարակի, Գուգարքի, Դսեղի, Լալվարի, Ջիլիզայի, Ստեփանավանի, Տաշիրի, Վայոց Ձորի «անտառային» մասնաճյուղերի անտառային կառավարման պլաններն արդեն մշակվել և հաստատվել են:

Նկար 5 Հայաստանի անտառները

Անտառային կառավարման պլանը տեխնիկական փաստաթուղթ է, որը մշակվել է անտառտնտեսական գործընթացների արդյունքում և հաստատվել անտառային կառավարման իրականացման համար: Այս փաստաթուղթը նկարագրում է անտառային կառավարման և անտառօգտագործման բազմակողմանի զարգացումը նախորդ ժամանակահատվածի ընթացքում և սահմանում անտառային կառավարման գործընթացներն առաջիկա 10 տարիների համար: Անտառային կառավարման պլանի նպատակն անտառային պաշարների կայուն և անխափան օգտագործումն է՝ համաձայն ազգային անտառային քաղաքականության և Ազգային անտառային ծրագրով սահմանված դրույթների:

Անտառային կառավարման պլանների մշակումը սկսվել է 2009 թ-ին Երևանի, Արագածոտնի, Գյումրիի և Հրազդանի «անտառտնտեսության» մասնաճյուղերում: Այնուամենայնիվ, վերը նշված գործունեությունները դադարեցին 2010 և 2011 թվականներին՝ պետական բյուջեից ֆինանսավորման բացակայության պատճառով:

Հետևաբար՝ Արագածոտնի մարզի կառավարման պլան դեռևս չկա:

Այնուամենայնիվ, վերջերս միջոցառումներ են իրականացվել առկա սահմանափակ անտառային պաշարների պաշտպանության համար:

2006 թ-ին «Ցիպերմետրին (Արրիվո)» քիմիական միջոցի օգնությամբ օդաքիմիական վնասատուների ու հիվանդությունների վերահսկողական միջոցառումներ իրականացվեցին Վայոց Ձորի, Կոտայքի, Արագածոտնի և Սյունիքի մարզերի «անտառտնտեսության» մասնաճյուղերի 19,795 հեկտար մակերես տարածք ընդգրկող վարակված անտառներում, որից 5,300 հեկտար՝ Վայոց Ձորի մարզում, 2,737 հեկտար՝ Կոտայքի մարզում, 2,904 հեկտար՝ Արագածոտնի մարզում և 8,854 հեկտար՝ Սյունիքի մարզում: Վերահսկողական միջոցառումներն իրականացվել են հիմնականում այն վարակված տարածքներում, որտեղ առկա են եղել տերևակեր վնասատուներ (ոսկետուտ) և բուսականության ցեցի թիթեռներ:

2007 թ-ին «Արրիվո» քիմիական միջոցի օգնությամբ բարձր արդյունավետություն ունեցող օդաքիմիական վնասատուների (տերևակեր վնասատուներ՝ ոսկետուտներ, երկրաչափներ) վերահսկողական միջոցառումներ իրականացվեցին 24,723 միլիոն

հեկտար տարածք ընդգրկող անտառածածկույթի վրա, որից 5,600 հեկտարը՝ Լոռու Մարզում, 4,424 հեկտարը՝ Տավուշի մարզում, 7,445 հեկտարը՝ Սյունիքի մարզում, 3,200 հեկտարը՝ Արագածոտնի մարզում, 2,054 հեկտարը՝ Վայոց Ձորի մարզում և 2,000 հեկտարը՝ Կոտայքի մարզում:

2008 թ-ին «Արրիվո» քիմիական միջոցի օգնությամբ բարձր արդյունավետություն ունեցող օդաքիմիական վերահսկողական միջոցառումներ իրականացվեցին տերևակեր վնասատուների դեմ (ոսկետուտ, երկրաչափ), իսկ «Բայլետոն» քիմիական միջոցի օգնությամբ՝ հիվանդությունների դեմ (կաղնու կեղծ ալրացողային սնկեր): Միջոցառումներն իրականացվեցին 7,700 միլիոն հեկտար տարածք ընդգրկող անտառածածկույթի վրա, որից 1,200 հեկտար՝ Արագածոտնի մարզում, 700 հեկտար՝ Կոտայքի մարզում, 1,000 հեկտար՝ Լոռու Մարզում, 3,210 հեկտար՝ Սյունիքի մարզում և 1,590 հեկտար՝ Վայոց Ձորի մարզում:

2012 թ-ին օդաքիմիական վերահսկողական միջոցառումներ իրականացվեցին տերևակեր վնասատուների և հիվանդությունների դեմ 9,000 միլիոն հեկտար տարածք ընդգրկող անտառածածկույթի վրա, որից 2,500 հեկտար՝ Սյունիքի մարզում, 1,200 հեկտար՝ Վայոց Ձորի մարզում, 2,800 հեկտար՝ Արագածոտնի մարզում, 2,500 հեկտար՝ Կոտայքի մարզում:

2013 թ-ին տերևակեր վնասատուների և հիվանդությունների դեմ օդաքիմիական վերահսկողական միջոցառումներ իրականացվեցին 8,870 միլիոն հեկտար տարածք ընդգրկող անտառածածկույթի վրա, որից 5,810 հեկտար՝ Սյունիքի մարզում, 1,100 հեկտար՝ Վայոց Ձորի մարզում, 1,000 հեկտար՝ Արագածոտնի մարզում, 960 հեկտար՝ Կոտայքի մարզում:

2014 թ-ին տերևակեր վնասատուների և հիվանդությունների դեմ օդաքիմիական վերահսկողական միջոցառումներ իրականացվեցին 6,300 միլիոն հեկտար տարածք ընդգրկող անտառածածկույթի վրա, որից 2,700 հեկտար՝ Կոտայքի մարզում, 1,400 հեկտար՝ Վայոց Ձորի մարզում, 2,200 հեկտար՝ Արագածոտնի մարզում:

Վերահսկողության օդաքիմիական մեթոդները բավականին բարձր արդյունավետություն ունեցան:

2014 թ-ից ի վեր Շենը համագործակցում է ԷԿՈ Խորհրդատվական ընկերության (Գերմանիա) կողմից իրականացվող GIZ-ի տարածաշրջանային «Ինտեգրված կենսաբազմազանության կառավարում. Հարավային Կովկաս» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը նախատեսում է հողի էրոզիայի դեմ պայքարն իրականացնել Արագածոտնի և Շիրակի մարզերում նոր անտառներ տնկելու միջոցով: Մինչ օրս այդ նպատակով Արագածոտնի մարզում ստեղծվել է փոքր տնկարան, տնկվել և ցանկապատվել են գրեթե 20 հեկտար տարածք ընդգրկող անտառներ: Մյուս 60 հեկտար տարածքը պատրաստվել և ցանկապատվել է հետագա անտառապատման համար:

Անտառների վերականգնումը՝ մեծ ծավալներով ծառատնկումը և վերջինիս գոյատևման ապահովումը, վերը նշված խնդրի լուծման ամենակարևոր ուղղություններից է: Այդ պատճառով Շենը պատասխանատվություն է վերցրել այդ բացն իր հնարավորություններով լրացնելու համար: 2010 թ-ից ի վեր Շենն իր տնկարանների

անտառային և դեկորատիվ ծառերը նվիրաբերել է Արագածոտնի մարզի, ինչպես նաև Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի գյուղերին:

Ինչ վերաբերում է պահպանվող տարածքներին, ապա հետազոտվող տարածքում գտնվում է միայն մեկ հատուկ պահպանվող տարածք՝ «Արագածի ալպյան արգելավայրը»: Այն հիմնադրվել է 1959 թ-ին, ընդգրկում է 300 հեկտար տարածք: Վերջինիս որդեգրած բնապահպանական նպատակը Քարի լճի և հարակից տարածքների ապահովումն է ալպյան բուսականությամբ: Բացի այդ՝ «Արագածի ալպյան արգելավայրի» ընդգրկած տարածքը (9,446 հա) առաջարկվել է որպես «Զմրուխտ» էկոլոգիական ցանցի տարածք: Պետական արգելավայրը և նրա հարակից տարածքներն ընդգրկում են Արագած լեռան բոլոր գագաթներն ու խառնարանները:

Պետությանը պատկանող անտառները կառավարվում են «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից, որը գործունեություն է ծավալում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և շրջաններում գտնվող իր մասնաճյուղերի միջոցով: Դրանք կոչվում են շրջանային անտառային տնտեսություններ:

Արագածոտնի անտառային տնտեսության ցուցանիշներն ու կոնտակտային տվյալները՝ ստորև.

Արագածոտնի անտառային հողերն՝ ըստ ճյուղերի

No	Մասնաճյուղ	Ընդհ. մակ., հա	անտառապատ
1	Արագածոտն	10,848	5,215
	Ընդհանուր	*10,848*	*5,215*

«Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Հասցե: Արագածոտնի մարզ, Ապարան

Հեռ: 0-252 2 46 93

Տնօրեն: Վռամ Աբրահամյան

«Արագածոտնի անտառտնտեսության» հողերն՝ ըստ ենթամասնաճյուղերի

No	Ենթամասնաճյուղ	Ընդհ. մակ., հա	անտառապատ
1	Երնջատափ	2,824	1,560
2	Արագած	4,402	2,700
3	Բյուրական	3,622	955
	Ընդհանուր	*10,848*	*5,215*

Արոտավայրեր. Արոտավայրերը Հայաստանում դասվում են անասնապահության համար կարևորագույն բնական ռեսուրսների շարքին, հատկապես՝ ընդհանուր կենսաբազմազանության տեսանկյունից: Այս կարևոր ռեսուրսների անկանոն և հախուռն շահագործումը հարուցում է բազմաթիվ արմատական էկոլոգիական խնդիրներ, որոնք ազդում են շրջանի ամբողջ տնտեսության վրա մի շարք ուղղություններով՝ կենդանիների արտադրողականություն, ըստ այդմ՝ գյուղատնտեսության աստիճանական թուլացում,

գներ, բնակչության սպառած սննդի որակ, և ինչն առավել մտահոգիչ է՝ ապագա սերունդների համար որևէ էական ռեսուրսի պահպանման հնարավորության նվազման բարձր ռիսկ կամ առհասարակ այդօրինակ ռեսուրսների իսպառ կորուստ մոտ ապագայում:

Այս խնդիրը նույնակերպ եղանակով տարածվում է ամբողջ Արագածոտնի մարզի և Ապարանի տարածաշրջանի վրա և համանման կարևորություն ունի ամբողջ Հայաստանի համար:

Ավելի առարկայական հետազոտության համար մենք կենտրոնացել ենք պիլոտային համայնքների ուղղությամբ՝ օգտագործելով տարածաշրջանների և համայնքների արոտավայրային տարածքների հասանելի և ցուցանշված տվյալները:

Քուչակի համայնքում արոտավայրերը զբաղեցնում են 860 հա, որից 430 հա՝ նախալեռներում, իսկ 430 հա՝ լեռնային շրջաններում: Արոտավայրերը հեռու են, ուստի՝ կենդանիներն արածելու համար ստիպված են հատել մոտ 10-14 կմ ճանապարհ, ինչն, անշուշտ բացասաբար է ազդում նրանց արտադրողականության վրա: Ժամանակին այստեղ կառուցված են եղել ճանապարհներ և սանիտարական համակարգ, սակայն դրանք շատ շուտով ավերվել են և ներկայումս կրկին բարելավման կարիք ունեն:

Ապարանում արոտավայրերը զբաղեցնում են 2201,50 հա, Արայի համայնքում՝ 2,800 հա, որից 15 հա անտառպատվել է «Հարավային Կովկասի լեռնային շրջաններում հողի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն» ծրագրի շրջանակներում, իսկ 35 հա ցանկապատված է է հողի բնական հաջորդականության ապահովման համար:

Ջրային ռեսուրսներ. Արագածոտնի մարզը բավականին հարուստ է ջրային պաշարներով, ինչպիսիք են ջրամբարներն ու գետերը:

Նկար 6 Ապարանի ջրամբար

Ջրային պաշարները գերազանցապես գոյանում են Արագածի ջրերից, անձրևաջրերից և բնական աղբյուրներից: Մարզի խոշոր գետերն են Քասաղը և Գեղաձորը: Կան նաև բազմաթիվ հեղեղատներ, որոնցից ամենահայտնին Մաստարայի հեղեղատն է:

Արզնի-Շամիրամ ջրանցքն անցնում է մարզի տարածքով, գործում է նաև Թալինի ջրանցքը:

Մարզը հարուստ է նաև այլ ջրամբարներով՝ Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի և Սաբունչու: Ապարանի ջրամբարը Հայաստանի տասը խոշոր ջրամբարների շարքում է:

Աղյուսակ 19. Ապարանի ջրամբար

	Ծավալ, մլն. մ³	Օգտագործվող ծավալ, մլն. մ³	Ջրթող կառուցվածքի բարձրությունը (մ)
Ապարան	91	81	52,6

5.2 Վերոհիշյալ պաշարների օգտագործման փորձն ու զարգացման միտումները. արձանագրված լավագույն փորձերը, սովորությունները և բարելավման անհերքելի անհրաժեշտությունը

Արագածոտնի մարզը մշտապես արդյունահանվող բնական հարստությամբ և հանածոներով հարուստ մարզերից մեկն է: Դրանցից ամենակարևորները 17 տարբեր գույնի գունավոր մետաղներն են՝ պղինձ, մոլիբդեն, ցինկ, ինչպես նաև թանկարժեք մետաղներից ոսկին ու արծաթը: Առկա են նաև ոչ մետաղային մի շարք հանածոներ (շինարարական և երեսպատման քարեր, բազալտի հում նյութ, կրաքարի պաշարներ և վառվող թերթաքար, մարմար, գրանիտ, պերլիտ և այլն):

Համաձայն 2015 թ պետական վիճակագրական տվյալների՝ ստացիոնար աղբյուրներից մթնոլորտ արտանետված վտանգավոր նյութերի՝ 1 շնչին բաժին ընկնող քանակը կազմում է 63.5 կգ, այն դեպքում երբ ՀՀ միջին ցուցանիշը կազմում է 42.9 կգ: Այս ցուցանիշով Արագածոտնի մարզը Լոռուց, Տավուշից ու Կոտայքից հետո 4-րդն է (համապատասխանաբար 206.9 կգ, 157.5 կգ, 96.9 կգ): Շրջակա միջավայրի պաշտպանության և վերջինիս ռեսուրսների օգտագործման համար գանձվող 1 շնչին բաժին ընկնող վճարը կազմում է 728.7 ՀՀ դրամ, որը գրեթե 1.4 անգամ քիչ է ՀՀ միջին ցուցանիշից (1,005.7 ՀՀ դրամ):

Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի պաշտպանության և վերջինիս ռեսուրսների օգտագործման համար ըստ կազմակերպությունների գանձվող վճարին, ապա այս հարցում Արագածոտնի մարզն ունի բավականին նշանակալի մասնաբաժին, որը կազմում է 1,273.3 ՀՀ դրամ՝ չնայած որ ՀՀ-ում դրա միջին ցուցանիշը 773.8 ՀՀ դրամ է՝ ըստ կազմակերպությունների: Այստեղ Արագածոտնը զբաղեցնում է 4-րդ տեղը՝ Արարատից, Վայոց Ձորից և Արմավիրից հետո:

Բավականին ողջունելի է, որ Արագածոտնում գրանցված է շրջակա միջավայրի պաշտպանության օրենսդրության խախտման բացահայտված դեպքերի ցածր ցուցանիշներից մեկը՝ մարզի 100.000 մարդուց՝ 10.7 միավոր, որը բավականին ցածր է ՀՀ միջին ցուցանիշից (29.0):

Ինչ վերաբերում է հողօգտագործմանը և արոտավայրերի օգտագործմանը, ապա հիմնվելով համայնքների ղեկավարների և համապատասխան մասնագետների հետ անմիջական հարցազրույցների վրա՝ կարելի է ասել, որ գյուղական բնակչության շրջանում բացակայում են որոշակի հատուկ սովորությունները կամ կանոնները: Վերջիններս սովորություն ունեն զբաղվելու արածեցմամբ, ոռոգմամբ և բնական ռեսուրսներին առնչակից այլ զբաղմունքներով անկանոն կերպով և անկազմակերպ մոտեցումներով:

Գոյություն ունի նաև ՀՀ Անտառային օրենսգիրքը՝ ընդունված 2005 թ, որով սահմանվում են ոլորտի հիմնական իրավակարգավորումները:

6. ՊԻԼՈՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՂ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՐՈՆՔ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ ԿԱՄ/ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2011-2016 ԹՎԱԿԱՆՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐԸ

6.1 Կազմակերպությունների կողմից իրականացվող/ֆինանսավորվող ծրագրերի համառոտ նկարագիրը. նպատակային ոլորտները և ընթացիկ կարգավիճակը (ավարտված կամ ընթացիկ)

Ներկայումս (2016 թ□) «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (CARMAC) կողմից Ապարանում իրականացվում է «Արոտավայրերի ոռոգում» ծրագիրը, որը 80%-ով ֆինանսավորվում է կառավարության կողմից, 20%-ով՝ համայնքի: Առաջին փուլը մեկնարկել է 2016 թ□-ին, իսկ երկրորդ փուլը նախատեսված է իրականացնել առաջիկա տարում: Նրանք նաև ձեռք են բերել 2 տրակտոր, ինչը թույլ է տալիս հողը վարել ավելի էժան, քան նախկինում օգտագործվող ծառայության դեպքում:

«Կամրջակ» բարեգործական կազմակերպության հետ համագործակցության շնորհիվ մինչ օրս համայնքում հնարավոր է դարձել իրականացնել մի շարք բարենորոգման ծրագրեր, ինչպես օրինակ՝ գազաֆիկացում, կոյուղագծերի և կոյուղատար համակարգի վերանորոգում: Գյուղում կազմակերպվում է ամենամյա ծառատունկ: «Մաքուր էներգիա և մաքուր ջուր» ծրագրի շրջանակներում գյուղում իրականացվել է լուսավորության բարելավում:

Արայի գյուղը ներկայումս 2015 թ□-ին մեկնարկած «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագրի շրջանակներում ընտրված է որպես թիրախային համայնք: Ներկայումս իրականացվում են ոռոգման աշխատանքներ, բարեկարգվել են արոտավայրեր տանող ճանապարհները, մոտ ապագայում նախատեսվում է իրականացնել նաև քարահավաքման աշխատանքներ:

Լուսագյուղ, Հնաբերդ և Քուչակ գյուղերը նույնպես վերոնշյալ ծրագրի մաս են, և նոր արոտավայրերի հիմնումը, էրոզիայի կառավարումը և առնչակից այլ բարելավման աշխատանքները վերաբերում են նաև այս համայնքներին և ներկայումս ընթացքի մեջ են:

Արագածոտնի մարզում ակտիվորեն իրականացվում են դպրոցների կառուցման և ճանապարհաշինության ծրագրեր:

6.2 Լավագույն և վատագույն փորձերը. հաջողության պատմություններ և քաղված դասեր

Համայնքների ղեկավարների հետ նախնական հարցազրույցներում քննարկվել և բացահայտվել են պիլոտային համայնքներում ներդրված բարելավման ծրագրերի դրական և ձախողված օրինակները։

Ըստ նրանց՝ հիմնական թերացումներից մեկը մարզում և համայնքում առկա բնական հանածոների, քարի պաշարների և այլ արժեքավոր ռեսուրսների չօգտագործումն է։

Ինչպես նշվել է նախորդ գլուխներում, ամբողջ մարզի տարածքում առկա են ոսկու, կավի, կրաքարի և այլ կարևոր ռեսուրսների հանածոներ, և եթե դրանք տեղին և ամբողջ ծավալով օգտագործվեին, բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրներ լուծում կստանային, ինչպես օրինակ՝ գործազրկությունը, արտագաղթը, մշակութային հիմնախնդիրները և զբոսաշրջությունը։

7. Եզրակացություն

Ամփոփելով սույն զեկույցում հավաքված, վերլուծված և լուսաբանված տվյալները՝ կարելի է ասել, որ Արագածոտնի մարզը սոցիալ-տնտեսական զարգացման ճանապարհին խոչընդոտների հետ միասին օժտված է նաև բազում առավելություններով։ Վերջիններիս շարքում է ՀՀ մայրաքաղաք Երևանից կարճ հեռավորությունը, բնական պաշարներով հարուստ լինելը, պատմական և մշակութային հուշարձանները, մարզի տարածքով անցնող բազմաֆունկցիոնալ ճանապարհը, ինչպես նաև հյուրընկալ, աշխատասեր և լուսավոր գաղափարներով լի բնակչությունը։

Դիտարկելով պիլոտային համայնքների թիրախային տարածքների ուժեղ կողմերը՝ արտադրությունը պետք է համարվի արդյունաբերության հիմնական ուղղություն, հատկապես՝ վերջինիս սննդի և տեքստիլ ճյուղերը։

Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա մարզում զարգացած են ինչպես անասնապահությունը, այնպես էլ այգեգործությունը։ Այնուամենայնիվ, բնական պաշարների, այդ թվում՝ արոտավայրերի չկանոնակարգված և սխալ օգտագործման, ինչպես նաև անտառային տարածքների պակասի պատճառով շրջակա միջավայրը շարունակաբար վնասվում է՝ առաջացնելով տեղական և միջազգային կազմակերպությունների հոգածության կարիքը՝ ուղղված ռեսուրսների վաղ դեգրադացիայի և գյուղատնտեսական արտադրանքի՝ բարձր ռիսկի տակ հայտնվելու կանխմանը։ Արագածոտնի մարզը, հատկապես՝ Ապարան քաղաքը, հարուստ չեն կանաչ տարածքներով, այդ թվում՝ անտառներով, ինչի պատճառով՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից չի կարող կյանքի կոչվել անտառային տարածքների կառավարման որևէ կոնկրետ պլան։ Այս հարցում շատ կարևոր է մարզի ամբողջ տարածքում հնարավորինս շարունակել անտառային տարածքների պաշտպանությունն ու նոր կանաչ տարածքների ստեղծումը։

Կա ևս մեկ փաստ, որ ցույց է տալիս, որ ոչ միայն բուսականությունն ու հողի պաշարներն են անկանոն կերպով օգտագործվում, այլև մեծ ներուժ ունեցող բնական հանածոները, որոնք կարող են դառնալ մարզի տնտեսական զարգացման կարևոր բիզնես խաղաքարտ։

8. Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Տարածքային վիճակագրություն: http://armstat.am/am/?nid=50
2. Արագածոտնի մարզպետարան, պաշտոնական կայք: http://aragatsotn.mtad.am/
3. Մոնիտորինգի և գնահատման միջանկյալ (կիսամյակային) հաշվետվություն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016 թ տարեկան աշխատանքային պլանի, Արագածոտնի մարզպետարան, պաշտոնական կայք: http://aragatsotn.mtad.am/
4. Ապարանի համայնքապետարան, պաշտոնական կայք: http://aparan.am/Pages/Home/Default.aspx
5. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, http://www.arlis.am/
6. «Գյուղատնտեսական Բարեփոխումների Աջակցության» ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ծրագրի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը; http://www.arspiu.com/home.0.html?&L=0
7. «Հայանտառ» ՊՈԱԿ, պաշտոնական կայք: http://hayantar.am/protectioncontrol/
8. Սոցիալ – տնտեսական և շրջակա միջավայրի բազային ուսումնասիրություն՝ ներառյալ մոնիտորինգի համակարգի մշակումը, «Հարավային Կովկասի լեռնային շրջանների էրոզիայի համալիր վերահսկողություն» ծրագրի ուսումնասիրության արդյունքներ. Հաշվետվություն, փետրվար, 2016 թվական
9. «Հարավային Կովկասում էրոզիայի համալիր վերահսկողություն» ծրագրի սոցիալ – տնտեսական բազային ուսումնասիրություն. Հաշվետվություն, ««Փաստարկ» խորհրդատվական բյուրո» ՍՊԸ, նոյեմբեր, 2014 թվական
10. «Հարավային Կովկասում էրոզիայի համալիր վերահսկողություն» ծրագրի սոցիալ – տնտեսական բազային ուսումնասիրություն. Հաշվետվություն, ««Փաստարկ» խորհրդատվական բյուրո» ՍՊԸ, Հունիս, 2014 թվական
11. Արագածոտնի մարզի Լուսագյուղ համայնքի համար հակաէրոզիոն տնկարանային ծրագրի պլանավորում Հաշվետվություն, ԳՄՀԸ, 2014 թվական
12. Հայաստանում էրոզացված և դեգրադացված տարածքների ընտրություն՝ անտառատնկման, էրոզիայի դեմ պաշտպանության միջոցների և արոտավայրերի բարելավման համար. Հաշվետվություն, ԳՄՀԸ, 2015 թվական
13. Ոլորտում իրականացվող աշխատանքների վերլուծություն համայնքապետերի և համայնքապետարանների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների միջոցով
14. Բնակչության տվյալների համայնքային ռեգիստրներ
15. Կենդանիների համայնքային ռեգիստրներ

9. Հավելված

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Դաշտային աշխատանք: Ուղեցույց _ Ապարանի շրջան

	_____ Հարցված (Անուն, Ազգանուն, պաշտոն)		Բջջ.հեռ. _____ Էլ. փոստ _____ Հարցվածի տվյալներ		Նշում՝ ըստ համայնքների				Նշում՝ ըստ շրջանի
	Պահանջվող տվյալներ	Ինֆորմացիայի տեսակը/մեթոդը	Վերաբերելի շրջանը	Ինֆորմացիայի աղբյուրը/ ինֆորմա տուն	1. Արալի	2. Քուչակ	3. Լուսագյուղ	4. Հնաբերդ	Արագածոտնի շրջան (ներառյալ՝ Ապարան)
1.	Տնային տնտեսությունների՝ գրանցված և փաստացի թվերն՝ ըստ առանձին համայնքների և ամբողջ տարածաշրջանի	Տնային տնտեսությունների գրանցամատյան ների տպագիր օրինակներ	2011 – 2016 (ներառյալ վերջին թարմացումներն առ 2016 թ□ նոյեմբեր)	Համայնքի ղեկավար ներ և համայնքապետ արաններ					
2.	Հողերի, արոտավայրերի, բնական պաշարների և առհասարակ (առկայության դեպքում) շրջակա միջավայրին, հողային պաշարներին ու բնական ռեսուրսներին վերաբերող ցանկացած քարտեզ (սովորաբար դրանք կախված են լինում համայնքի ղեկավարների	Քարտեզագրական ուղեցույցների (առկայության դեպքում) լուսաձրումներ/նկարներ + տպագիր օրինակներ	2015 – 2016 (վերջին թարմացված տվյալներով)	Համայնքի ղեկավար ներ և համայնքապետ արաններ					

	աշխատասենյակներում)								
3.	Հողերի, արոտավայրերի, բնական պաշարների և առհասարակ շրջակա միջավայրին, հողային պաշարներին ու բնական ռեսուրսներին վերաբերող ցանկացած քարտեզ	Մանրամասն հարցազրույց + լուսաձրումներ/նկարներ, գրաֆիկական պատկերներ, բանավոր նկարագրություն ներ կամ պատկերագրեր (առկայության դեպքում)	2011 – 2016, էական փոփոխություններ և փաստեր	Համայնքի ղեկավարներ և առնչակից անձնակազմ, շրջանի համայնքապետարան					
4.	Արտագաղթի պատկերի մասին փաստական տվյալներ՝ ըստ ուղղությունների, համայնքների ու շրջանի	Հարցազրույցներ և տպագիր օրինակներ	2011 – 2016, վերջին թարմացումներ	Համայնքի ղեկավարներ					
5.	Անասունների գլխաքանակն ըստ համայնքների/շրջանի (ներառյալ միջինացված՝ ըստ տնային տնտեսությունների); մանր եղջերավոր անասունների (ոչխարներ և այծեր) գլխաքանակն ըստ համայնքների/շրջանի; անասունների արածեցումը համայնքում/շրջանում	Տեղեկագրերի տպագիր օրինակներ; հարցազրույցներ	Վերջին թարմացումներ առ 2016 թ. նոյեմբեր, փոփոխություն ները 2011 – 2016 թթ. ընթացքում	Համայնքի ղեկավարների գրասենյակներ համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ					

6.	Առանցքային բարելավումներ և գործառնություն, հողօգտագործման և խոշոր ու մանր եղջերավոր անասունների արոտավայրերի կառավարմանը նպաստող ծրագրեր	Հարցազրույցներ, ցուցակներ և նկարագրություն ներ, քանակի ցուցիչներ (առկայության դեպքում)	2011 – 2016, վերջին թարմացումներ, ընթացիկ և ծրագրված	Համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ					
7.	Հողօգտագործման առանցքային ծրագրեր	Հարցազրույցներ, ցուցակներ և նկարագրություն ներ, քանակի ցուցիչներ (առկայության դեպքում)	2011 – 2016, վերջին թարմացումներ, ընթացիկ և ծրագրված	Համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ					
8.	Գյուղատնտեսության մեջ մանր և խոշոր եղջերավոր անասունների համար նախատեսված ջրօգտագործման ծրագրեր (ոչ խորքային)	Հարցազրույցներ, ցուցակներ և նկարագրություն ներ, քանակի ցուցիչներ (առկայության դեպքում)	2011 – 2016, վերջին թարմացումներ, ընթացիկ և ծրագրված	Համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ					
9.	Ջրօգտագործման ծրագրեր (ոչ	Հարցազրույցներ, ցուցակներ և	2011 – 2016, վերջին թարմացումներ,	Համայնքի ղեկավարներ և					

	խորքային)	նկարագրություն ներ, քանակի ցուցիչներ (առկայության դեպքում)	ընթացիկ և ծրագրված	պատկան անձնակազմ					
10.	Նորարարական ծառայություններ/ ծրագրերի կողմից համայնքներում/շրջանում հիմնված և թողարկված արտադրանք (նշել անհրաժեշտության դեպքում)	Հարցազրույց՝ նշումներով/գրառումներով[16]	2011 – 2016	Համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ					
11.	Հատուկ դեպքեր, տարածքում իրականացված (չ/)հաջողված ծրագրերի պատմություններ, շոշափելի ազդեցություն	Հարցազրույց՝ նշումներով/գրառումներով	2011 – 2016 (ազդեցության կարևորության/անհրաժեշտության դեպքում՝ նաև մինչ այդ)	Համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ					
12.	Խնդրում ենք նշել կանանց տոկոսային (կամ՝ 100 մարդուց քանի կին) ներգրավվածությունը հետևյալ ոլորտներում. ա) անասունների խնամք և կերակրում; բ) կաթի արտադրում; գ) մսի/վերամշակված	Հարցազրույց՝ նշումներով/գրառումներով	Ներկայիս իրավիճակը, առանձնահատուկ զարգացումներն ու փոփոխություն	Համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ (ամենաիրազեկ					

[16] Ապացուցող փաստաթղթերը/տպագիր օրինակներն առկայության դեպքում ցանկալի են։

	մսի արտադրություն, դ) կաթի վաճառք, ե) մսի/վերամշակված մսի վաճառք, զ) ֆերմերություն/գյուղատնտեսություն/հողային աշխատանքներ, է) այգեգործություն, ը) հանրային/մշակութային ոլորտ; թ) պետական կամ մասնավոր ընկերություններ և/կամ ծրագրեր; ժ) այլ ոլորտներ (կատարել հատուկ նշումներ)		ները (2011 – ցարդ)	անձը)					
13.	Ի՞նչ կարիքներ կամ բացեր եք տեսնում համայնքի հետագա զարգացման ճաապարհին հետևյալ ասպարեզներում՝ ա) աշխատատեղեր, կրթություն/մասնագիտական գիտելիքներ; բ) հողային ռեսուրսներ, դրանց օգտագործում; գ) Բնական ռեսուրսներ; դ) Հանրային/մշակութային միջոցառումներ; ե) այլ ոլորտներ (կատարել հատուկ նշումներ)	Հարցազրույց՝ նշումներով/գրառումներով	Ներկայիս իրավիճակը, առանձնահատուկ զարգացումներն ու փոփոխություն ները (2011 – ցարդ)	Համայնքի ղեկավարներ և պատկան անձնակազմ (ամենաիրա զեկ անձը)					

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

WITH FUNDING FROM
AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

Կենսաբազմազանության Ինտեգրված Կառավարում Հարավային Կովկասում, ԿԻԿ

GIZ Հայաստանյան գրասենյակ

Բաղրամյան 4/1, 0019 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0)10 581877
www.giz.de
www.biodivers-southcaucasus.org

Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH